



ЧИСЛА

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Աիդա Պետրոսյան

# ՄԱՍԵՒԻԿ

Մայրենիկի գիրք-տեսոք  
2-րդ դասարանցիների համար

2-րդ մաս

«ԼՈՒՍՎԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՆՈՐ ԴՊԲՈՑ»  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1996

**ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ  
ՄԱՍԻՆԻԿ**

մայրենիկ գիրք-տեսոր 2-րդ  
դաստիանցիների համար  
2-րդ մաս, 92 էջ  
Եր. «Նոր դպրոց», 1996

© «ՆՈՐ ԴՊՐՈՑ»  
հրատարակչություն,  
1996

# ԱՃԱԱՆ ՎԵՐԶԸ

Սարի լանջին,

Մեզի միջում

Խոխոշում է

Ու տրտնջում

Չուրը բարակ,

Չուրը տխուր.

- Վաշ-վիշ-շ; Վաշ-վիշ-շ,

Ո՞ւր կորան, ո՞ւր,

Տերև ու խոտ,

Վարդը շաղոտ,

Սարվորն ուրախ,

Սրինգ ու խաղ:

Շուրջս դատարկ,

Շուրջս տխուր...

Վաշ-վիշ-շ, Վաշ-վիշ-շ,

Ո՞ւր կորան, ո՞ւր:

*մեզ* - մշուշ, մառախոտ

*խոխոչալ* - կարկաչել, առվակի ձայն համել

*տրտնջալ* - դժգոհել, սրտնեղել

*շաղոտ* - շաղով բրջված

*սարվոր* - աճասուններին սար տանող և այնտեղ խնամող, սար զնացած մարդ

*սրինգ* - երաժշտական գործիք՝ պատրաստված փայտից կամ եղեղից

Բանաստեղծությունից դուքս գրիր քեզ դուք եկած հատվածը:

---

---

---

---

---

---

---

Դուքս գրիր ջրի արամադրությունն արտահայտող հատվածը:

---

---

---

---

---

---

---

Ինչո՞ւ է տխրում ու տրտնջում ջուրը:

---

---

---

---

---

Ինչո՞ւ է բանաստեղծությունը վերնագրված «Աշնան վերջը»:

---

---

---

---

---

Բանաստեղծության ո՞ր տողերով կհաստատես քո պատասխանը:

---

---

---

---

---

Դու կարո՞ղ ես ասել՝ ո՞ւր կորան, ո՞ւր...

### *Słowa ni jutur*

## ՈՒրախ սարվորն

*Εύρηκεν ο θεός την αλήθευστην.*

## Աշունը շրջում է անտառում

## ԱՄՊԵ ՈՒ ՍԱՐԵ

Ամպը եկավ նստեց սարին,  
 Նստեց սարի սուր կատարին:  
 - Լսի՛, պապի՛, - ասավ նրան,  
 Լավ օրերդ անցան, կորան.  
 Խիստ սոսկալի  
 Ցուրտ է զալի:  
 Ասավ, գնաց:  
 Սարը կամաց  
 Մտավ սպիտակ  
 Վերմակի տակ:

**սոսկալի - սարսափելի**

**Ինչպիսի՞ն է սարի կատարը, ճիշտ պատասխանն ընդգծի՞ր:**

- |                |                 |
|----------------|-----------------|
| <i>ա) սուր</i> | <i>գ) կանաչ</i> |
| <i>բ) կլոր</i> | <i>դ) բարձր</i> |

**Ո՞ր տողում է դա արտահայտված:**

**Ինչպիսի՞ց ցուրտ է զալիս, ճիշտ պատասխանն ընդգծի՞ր.**

- |                        |                     |
|------------------------|---------------------|
| <i>ա) հաճելի</i>       | <i>գ) զարմանալի</i> |
| <i>բ) խիստ սոսկալի</i> | <i>դ) անտանելի</i>  |

**Ո՞ր տողում է դա արտահայտված:**

**Նկարի՞ր բանաստեղծության սկիզբն ու ավարտը:**

## ՉԱՓԱՐԵՒՏ

Թռչուններին բազավոր պիտի նշանակվեր: Աստված ասաց.

- Թռչուններից ով շուտ հասնի ինձ մոտ, նրան կկարգեմ բազավոր:

Արծիվը լայն բացեց թևերը և քոավ երկինք: Թռա՞վ, քռա՞վ, ետ դարձավ նայեց, տեսավ՝ ոչ մի թռչուն չի երևում:

- Ե՛, ես շա՞տ եմ առաջ,- ասաց Արծիվը,- ցած իշնեմ, փոքր-ինչ հանգստանամ:

Իջավ բարձր լեռան գազարին, նստեց սառն աղբյուրի ակին, լվացվեց, ջուր խմեց:

Արծիվի թևի տակից աննկատ դուրս քռավ մի թռչնակ, թևին տվեց, վեր բարձրացավ, շնչակտոր իրեն օցեց Աստծու մոտ և չրքչրքաց.

- Ես եկա, ես առաջի՞նը եկա:

- Դու ո՞վ ես, ինչո՞ւ ես եկել:

- Եկել եմ, որ դառնամ բազավոր:

- Քեզանից հետո թռչուն կա՞ եկող:

- Կարծեմ՝ Արծիվը,- մտաքերեց ծիտը:

- Հա՞,- ասաց Աստված,- շա՞տ ես ճարպիկ ու խելոք, խսկեխսկը՝ բազավոր:

Աստված՝ շոյեց ծտի ուսերը ու շարունակեց.

- Դե՞հ, իիմա գնա՞ ու թե՛ք մի ճիպոտ,

Որ ո՞չ կարճ լինի

Եվ ո՞չ էլ՝ երկար.


Որ ո՞չ ծուռ լինի

Եվ ո՞չ էլ՝ ուղիղ:

- Ճիպոտն ի՞նչ է որ,- չրքչրքաց թռչնակն ու դարձավ եկած ճանապարհով: Աչքին երևում էին ծանոր ցանկապատեր, ուր այնքա՞ն ճիպոտ կար: Եվ Եղ օրվանից ծիտը թռչում է ցանկապատից ցանկապատ, մեկ-մեկ վերցնում է ճիպոտները, նայում, չրքչրքացնում.

- Չի՛, չի՛, ե՞ս չի՛, ե՞ն չի՛,

Չի՛, չի՛, ես խսկի՛ չի՛:



Ծե որ գտնի Աստծու ասած ճիպոտը, կդառնա քոչունների քազավոր։ Մանավանդ շոյած տեղերը, զույգ ուսի վրա, մնացել են ճերմակ, ճերմակ։

Ու դեռ այսօր էլ ցանկապատի տակ փոքրիկ մի քոչնակ՝ ուսերը ճերմակ, ճիպոտ է փնտրում ու չըքչըրում։

- Չի՛, չի՛, ևս չի, և՛ն չի,  
Չի՛, չի՛, ևս իսկի՛ չի։  
Չափայծիտն է։

չափար	- ցանկապատ
կարգել	- ճշանակել
ակ	- այն տեղը, որտեղից դուրս է զայխ (քյում է) աղբյուրի ջուրը, ջրի ակոնք, աղբյուր
ջրչորակ	- քոչնային ձայն հանել
շնչակառ	- շունչը կտրվելով

*Լրացրու.*

Արծիվը \_\_\_\_\_ քևերը և բռակ երկինք:

Իշակը \_\_\_\_\_ զագարին, ճատեց \_\_\_\_\_ ակին, լվացվեց, ջուր խմեց:

Պատմիք՝ Չափարծիտն ինչպե՞ս հասավ Աստծու մոտ:

---

---

---

*Ավարտիք.*

Ու դեռ այսօր էլ \_\_\_\_\_

---

---

---

---

Ինչո՞ւ Աստված Չափարծին քազավոր չկարգեց:

---

---

---

---

Ինչպիսի՞ն է Չափարծիտը: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

---

---

---

Ի՞նչ կմտածի Արծիվը, եթե իմանա Չափարծոի արարքի մասին:

---

---

---

Պատմություն հորինիք.

Ինչպես արծիվը դարձավ բռչունների բազավոր

---

---

---

---

---

---

---

---

## ՓԱՓՈՒԿ ԶՅՈՒՏ

Զյուն, փափո'կ ձյուն, սպիտակ ձյուն,  
Զգույշ իջի՛ր աշխարհին,  
Ծաղիկները մտել են քուն,  
Հողն է նրանց անկողին:

Հանդարտ, կամաց իջի՛ր, այնպես՝  
Ծաղիկները չարքնանան,  
Ծածկի՛ր նրանց քնքուշ ու հեզ,  
Զգո՞ւյշ, զգո՞ւյշ անսահման:

Զյուն, փափո'կ ձյուն, սպիտակ ձյուն,  
Հանգիստ, խաղաղ իջի՛ր վար,  
Ծաղիկները մտել են քուն,  
Ծաղիկները ցրտահար:

- |                |                                       |
|----------------|---------------------------------------|
| <i>հանդարտ</i> | - խաղաղ, հանգիստ, մեղմ, քերև, հեզ     |
| <i>հեզ</i>     | - մեղմ, հանդարտ, բույլ, քնքուշ, նրբին |
| <i>վար</i>     | - մերքի                               |
| <i>ցրտահար</i> | - ցրտից վճասված, ցորտոր տարած         |

Զյունն ինչպե՞ս է իջնելու. դո՛րս գրիր համապատասխան տողերը:  
Նմուշ՝ Հանդարտ, կամաց իջի՛ր, այնպես...

---

---

---

Իսկ ձյունն ինչպե՞ս է ծածկելու ժաղիկներին.

Ծածկի՛ր նրանց \_\_\_\_\_

---

---

Գրի՛ր քեզ դուր եկած քառատողը և նկարի՛ր:

---

---

---

Գրի՛ր բանաստեղծության ամենագեղեցիկ տողը:

---

Ինչպիսի՞ տրամադրություն է արտահայտված բանաստեղծության մեջ՝  
ընդգծի՛ր.

խաղաղ	վատ
ամհանգիստ	չարացած
ուրախ	ախուր

Փորձիք նկարագրել ձյունը (ինչպիսի՞ն է, ի՞նչ զույնի է, ինչի՞ն է մման, որտեղի՞ց է զալիս, ինչպե՞ս է իջնում, ի՞նչ է լինում իջնելոց հետո):

---

---

Պատմիք ձմռան մասին:

---

---

---

---

## ՌՍԿՈՒ ԿԱՐԱՍԸ

Ես մեր ծերերիցն եմ լսել, մեր ծերերը իրենց պապերից, նրանց պապերն էլ իրենց մեծերից, թե մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի լուծ եզ:

Չնեռը էս աղքատ հողագործի եզները սատկում են: Գարունը, վար ու ցանքի ժամանակը որ զալիս է, եզ չի ունենում թե վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին:

Ես հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում, դուրս է զալի մի կարաս, մեջը լիքը ոսկի: Եզները լծած քողնում է, վազում է զյուղը՝ հողատիրոջ մոտ:

- Հե՞յ, աչքդ լուս, - ասում է, - քու հողումը մի կարաս ոսկի դուրս եկավ, արի տար:

- Չե՛, ախսպե՞ր, եղ իմը չի, - պատասխանում է հողատերը: - Հողի վարձը դու տվել ես, դու վարում ես, են հողումն ինչ էլ դուրս զա, քոնն է, ոսկի է դուրս եկել, քող ոսկի լինի, ելի քոնն է:

Սկսում են վիճել սա ասում է՝ քոնն է, նա, թե չէ՝ քոնը: Վեճը տաքանում է, իրար ծեծում են: Գնում են բազավորի մոտ գանգատ:

Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ՝ աչքերը չորս է քաց անում: Ասում է.

- Ոչ քոնն է, ոչ դրանք, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել - իմն է:

Իր մարդկանցով զնում է, որ հանի բերի: Գնում է կարասի բերանը քաց անել է տալի, տեսնում - ի՞նչ ոսկի - կարասը լիքը օձ...

Զարհուրած ու կատաղած ետ է զալի: Հրամայում է՝ պատժեն անգետ ռանչպարներին, որ համարձակվել են իրեն խարել:



- ԶԵ՞, քագավորն ապրած կենա,- զոռում են խեղճերը, - մեզ ինչո՞ւ ես սպանում. լավ չես տեսել, օձ չկա էնտեղ, ոսկի է, ոսկի...

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան ստուգեն: Մարդիկը գնում են, ետ գալի, թե՝ ճշմարիտ, ոսկի է:

- Վա՞հ,- զարմանում է քագավորը: Ասում է. - Երկի լավ չտեսա, կամ տեսած էն կարասը չեր: - Վեր է կենում մին էլ զնում:

Կարասը բաց է անում՝ դարձյալ մեջը լիքը օձ:

Էս ի՞նչ հրաշը է, ի՞նչ միտք ունի,- չեն հասկանում:

Թագավորը հրամայում է, հավաքում է իր երկրի իմաստուններին:

- Բացատրեցեք, - ասում է, - ո՞վ իմաստուններ, ի՞նչ հրաշը է սա: Էս հողագործներն իրենց հողում կարասով ոսկի են գտել: Ես եմ զնում - կարասը լիքն օձ է, դառնում, սրանք են զնում - ոսկի: Էս ի՞նչ կնշանակի:

- Դրա բացատրությունն էս է, քագավոր, երե չես բարկանալ, - ասում եմ իմաստունները: - Կարասով ոսկին աղքատ հողագործներին պարզեւ է դրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար: Երբ որ նրանք են զնում, իրենց արդար վարձին են զնում ու միշտ էլ ոսկի գտնում, իսկ երբ որ դու ես զնում, զնում ես ուրիշի բախտը հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում:

Թագավորը ցնցվում է, խոսք չի գտնում պատասխանելու:

- Լա՞վ, - ասում է, - դե հիմի էն որոշեցեք, թե էդ երկուսից որի՞ն է պատկանում զտած ոսկին:

- Իհարկե հողատիրոջը, - ձայն է տալիս վարող գյուղացին:

- Զե, վարողինն է, - մեջ է մտնում հողատերը: Ու նորից սկսում են կռվել:

- Լա՞վ, լա՞վ, կացե՛ք, - կանգնեցնում են իմաստունները, - ի՞նչ ունեք դուք - տղա կամ աղջիկ:

Դուրս է գալի, որ մեկը մի տղա ունի, մյուսը՝ մի աղջիկ: Իմաստունները վճռում են, որ սրանք գնան իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, էն զտած ոսկին էլ տան նրանց: Էստեղ համաձայնում են բարի մարդիկը, ուրախանում են, ու կոփքը վերջանում է, սկսում է հարսանիքը: Օխտն օր, օխտք գիշեր հարսանիք են անում, կարասով ոսկին էլ, որ պարզեւ էր դրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար, տալիս են իրենց զավակներին:

Բարին էստեղ, չարը էն ազահ քագավորի մոտ:

*մի օրավար հող* - մեկ օրում վարելու հող

*զարհուրած* - սարսափած

*ուաճշպար* - հողագործ գյուղացի

*դրկած* - ուղարկած

*դուրս է գալի* - պարզվում է

*մի լուծ եզ* - մի զուրանով վար անող եզներ

*արդար* - ազնիվ, անխարդախ

*պարզեւ* - նվեր, ընծառ

*հափշտակել* - խլել, գողանալ, կորզել

**Հմեղծված բառերի կողքին իմաստով մոտ այլ բառեր գրի՛ր:**

Կարասով ուկին աղքատ հողագործներին նվեր (\_\_\_\_\_):

Պողարկված իրենց ազնվորյան ու ազնիվ (\_\_\_\_\_) աշխատանքի համար:

Երբ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը խելու (\_\_\_\_):

**Ծարումակի՛ր՝ ինչպես նմուշում է արված:**

**Նմուշ՝ Խոփը մի բանի է դիպչում: - Խոփը դեմ է ընկնում մի բանի:  
Վեճը սաստկանում է: - Վեճը տաքանում է:**

Գնում է բազավորին բողոքելու:

---

---

Հրամայում է՝ պատժել անգետ հողագործներին:

---

---

Թագավորը մի կարաս ուկու անուն լսում է, թե չէ, ապշում է:

---

---

Սարսափած ու կատաղած ետ է զայիս:

---

Պարզվում է, որ մեկը մի տղա ունի, մյուսը՝ մի աղջիկ:

---

---

Վերնագրի՛ր կարասի պատմածը:

---

Չեմ հիշում քանի տարի էի մնացել հողում: Մի օր ինչ-որ բան ինձ դեմ առավ: Ասացի լավ է, հիմա ինձ հողից կհանեն: Այդպես էլ եղավ, մի զյուղացի ինձ հանեց ու քողեց գնաց:

---

Մեկ էլ տեսնեմ մի բազավոր եկավ, նայեց ինձ, գույնը զցեց ու հեռացավ: Երևի ուկիներս նրան դուր չեկան:

Հիմա ի՞նքն շարունակիր կարասի անունից պատմել:

---

---

---

---

---

---

---

---

Ինչպիսի՞ մարդ էր հողը վարող, ուկին զտնող գյուղացին: Ինչո՞ւ ես այդ-պես կարծում:

---

---

---

---

Երկու գյուղացիները ինչո՞վ են տարբերվում քաջակորից:

---

---

---

---

Աչքալուսանք տո՞ւ գյուղացիներին և շնորհավորին նրանց՝ զավակների ամուսնության առթիվ:

---

---

---

---

*Չարունակի՛ր կարասի և նրա միջի ուկու զրույցը քազավորի մասին:*

- Տեսնես ո՞վ է այդ մարդը,- շշուկով հարցըց կարասը:
- Գլխին քազ կար, ուրեմն քազավոր էր,- պատասխանեց ուկին:

*Չարունակիր ի նըղ հորինել.*

*Ես մեր ծերերից եմ լսել, մեր ծերերը՝ իրենց պապերից, նրանց պապերն էլ՝ իրենց մեծերից:*

## ԿԻԿՈՍԻ ՄԱՌԵ

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ:

Մի օր հերք աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկանը ջուրն է դրկում: Էս աղջիկը կուժն առնում է գնում աղբյուրը: Աղբրի զլսին մի քարձր ծառ է լինում: Էս ծառը որ տեսնում է՝ իրեն-իրեն միտք է անում.

- Հիմի որ ես մարդի զնամ ո՞ւ մի որդի ունենամ,  
անոնն էլ դնենք Կիկոս. Կիկոսը զա էս ծառին  
քարձրանա ու վեր ընկնի, քարովք դիպչի մեռնի...

- Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ...

Տեղն ու տեղը ծառի տակին նստում է՝ սկսում է  
սուզ անել.

Գնացի մարդի,  
Ունեցա որդի,  
Գդակը պոպոն,  
Անոնը Կիկոս.  
Վեր ելավ ծառին,  
Ցած ընկավ քարին...  
Վա՛յ Կիկոս ջան,  
Վա՛յ որդի ջան...

Մերն սպասում է, սպասում, տես-  
նում է չեկավ, միջնեկ աղջկանն է դր-  
կում: Ասում է. - Գնա՛ մի տե՛ս, քույրի  
ընչի՛ ուշացավ:

Միջնեկ աղջիկն է գնում:

Մեծ քույրը սրան որ հեռ-  
վից տեսնում է՝ ձենն ավելի է  
քարձրացնում:

- Արի՛, արի՛, անքախտ  
մորքուր, տես քու Կիկոսն  
ինչ եղավ:

- Ի՞նչ Կիկոս:  
- Բա չես ասիլ՝  
Գնացի մարդի,  
Ունեցա որդի,  
Գդակը պոպոն,  
Անոնը Կիկոս.

Վեր ելավ ծառին,  
Ցած ընկավ քարին...  
Վա՛յ Կիկոս ջան,  
Վա՛յ որդի ջան...

- Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ,- զոռում է միջնեկ քույրը, նստում է մեծ քրոջ կողքին ու  
սկսում են միասին սուզ անել:



Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկան, պստիկ աղջկանն է դրկում: Ասում է.

- Աղջի՛, մի գնա տե՛ս քույրերդ ի՞նչ եղան: Գնացին ետ չեկան:

Հիմի պստիկ աղջիկն է գնում: Գնում է տեսնում՝ երկու քույրերն էլ աղբրի գլխին նստած լաց են լինում:

- Քա՛, ընչի՞ եք լաց ըլում:

Մեծ քույրը թե՛ բա չես ասիլ՝

Գնացի մարդի,

Ունեցա որդի,

Գդակը պոպոզ,

Անունը Կիկոս.

Վեր ելավ ծառին,

Ցած ընկավ քարին...

Վա՛յ Կիկոս ջան,

Վա՛յ որդի ջան...

- Վա՛յ քու մորքուրին, Կիկոս ջան, վա՛յ,- սա էլ է գլխին տալիս ու մյուսների կողին նստում, ձեն-ձենի տալիս:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է աղջիկները չեկան, ինքն է գնում:

Հեռվից իրենց մորք տեսնում են թե չէ՝ երեք աղջիկն էլ կանչում են.

- Արի՛, արի՛, անքախտ տատի, տե՛ս քոռանդ գլխին ինչ է եկել:

- Ի՞նչ քոռ, ա՛յ աղջկերք, ի՞նչ է պատահել:

Մեծ աղջիկը թե՛ բա չես ասիլ, ա՛յ մեր՝

Գնացի մարդի,

Ունեցա որդի,

Գդակը պոպոզ;

Անունը Կիկոս.

Վեր ելավ ծառին,

Ցած ընկավ քարին...

Վա՛յ Կիկոս ջան,

Վա՛յ որդի ջան...

- Վա՛յ քոռանան քու տատի աչքերք, Կիկոս ջան. - մերն էլ ծնկանը զարկում է, նստում է աղջիկների կողքին, սկսում է նրանց հետ սուզ անել:

Մարդը տեսնում է կնիկն էլ գնաց աղջիկների ետևից ու սա էլ չեկավ: Ասում է՝ մի գնամ տեսնեմ էս ինչ պատահեց, որ սրանը իրար ետևից գնացին մնացին աղքրումը:

Վեր է կենում գնում:

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չէ, ձեն են տալի.

- Արի՛, արի՛, անքախտ պապի, արի տես քու Կիկոսի գլուխն ի՞նչ է եկել... վա՛յ քու Կիկոսին...

- Ի՞նչ Կիկոս, ի՞նչ եք ասում,- զարմանում է մարդը:

Մեծ աղջիկը թե՛ բա չես ասիլ, ա՛յ հեր՝

Գնացի մարդի,

Ունեցա որդի,

Գդակը պոպոզ,

Անունը Կիկոս.

Վեր ելավ ծառին,

Ցած ընկավ քարին...

Վա՛յ Կիկոս ջան,

Վա՞յ որդի ջան...

- Վա՞յ, Կիկոս ջա՞ն,- ծնկներին տալիս են ու սուզ են անում մեր ու աղջկերք:

Սրանց միջի խելոքը հերն է լինում: Ասում է.

- Այ հիմարներ, ի՞նչ եք նստել կստեղ ու սուզ եք անում: Ինչքան էլ սուզ անեք, ինչքան էլ լաց ըլեք, ին Կիկոսն էլ կենդանանալու չի: Վեր կացեք, եկեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք. լացով ի՞նչ պետք է անենք: Աշխարհի կարգ է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա:

Դու մի ասիլ՝ սրանց ունեցած-չունեցած չորստանին մի եզն է լինում, ունեցած փոշին էլ՝ մի քրոց ալյուր:

Գալիս են էս եզր մորքում, էս մի քրոց ալյուրն էլ հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, որ նոր հանգստանում են:

*դրկել* - ուղարկել

*քրոց* - բարակ ճյուղերից հյուսված խոր զամրյուղ

Հնարիք փակագծերում գրված բառերից ու արտահայտություններից մեկը, զրիք իր տեղում:

\_\_\_\_\_ մի բարձր ծառ է լինում:

(աղբյուրի մոտ, աղբյուրի զլսին)

\_\_\_\_\_ ծառի տակին նստում է, սկսում սուզ անել:

(իսկույն, տեղնուտեղը)

Կմիկն ու աղջկերը հենց սրա զլուխը տեսնում են քեզէ,

(կանչում են, ձեն են տալիս)

Արի՛, արի՛, անրախտ պապի, տես քո Կիկոսի

(ինչ է պատահել, զլուխն ինչ է եկել, ինչ փորձանք է պատահել)

, ինչպես եկել է, էնպես էլ պետք է զնա:

(կյանքն է այդպիսին, աշխարհիկ կարգ է, ինչ արած)

Նկարիք Կիկոսին և պատմիք մրա մասին:

---

---

---

---

---

Նամակ զրիք Կիկոսի հարազատներին:

---

---

---

---

Հիմա էլ Կիկոսին նամակ գրի՞ք:

Փորձի՞ր հետաքրքիր պատմություն հորինել.

Այ քեզ զարմանալի պատմություն...

# ՃՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

## I

Ժամանակով Կատուն ճռն էր,  
Ծունն էլ զլսին գդակ չուներ,  
Միայն, գիտեմ ոչ՝ որդիանց որդի  
ճանկել էր մի զառան մորքի:  
Եկավ մի օր, ձմեռվան մըտին,  
Կատվի կուշտը տարավ մորքին:

- Բարի աջողութ, ուստա Փիսոն,  
Գլուխս մրսեց, ի սեր Աստծոն,  
Ա՛ռ էս մորքին ու ինձ համար  
Սի գդակ կարի զլսիս հարմար:  
Վարձիդ համար միամիտ մնա՛,  
Համա-համա շատ չուշանա:

- Աչիս վրա, քեռի Քուչի.  
Սի գդակ ա, ին մի քուրք չի.  
Քու բանկազին խարեր համար  
Ուրբար օրը համեցեր տար:  
Փողի մասին ավելորդ ա,  
Սեր մեջ խոսելն էլ ամոր ա,  
Ի՞նչ մեծ քան ա, տո՛, իե՛ր օրինած,  
Սիա՞յն, միա՞յն մի գդակի վարձ:


Ուրբար օրը քեռի Քուչին՝  
Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին  
Թափ-քափ տալով՝ ծանր ու մեծ,  
Ուստա Կատվի շեմքում կանգնեց.  
- Ուստեն ո՞ւր ա... փափախս ո՞ւր ա...  
- Սի քիչ կացի - իրես կերի ա:

## II

Ուստեն եկավ քուրքը հազին,  
Ծանը տեսավ, քեղի տակին  
Իրեն-իրեն քիչ փնրփնրաց  
Ու մուշտարու վրա քնդաց  
- Ցուրտը տարա՞վ... վա՞հ, տնա՛շեն,  
Զես քող անում մի շունչ քաշեմ.  
Հեշտ քան ին չի՞՝, իլա նոր եմ  
Ցրցամ տվել, քե որ կարեմ:

- Դե հե՞ր օրինած, էտե՞նց ասա,  
Էդ բարկանալդ էլ ընչի՞ս ա:  
Փող եմ տվել, վախտին կարի,  
Թե չէ՝ ասա՝ էգուց արի:

Համ ասում ես, համ չես կարում,  
Համ խոսում ես, վրես գոռում,  
Հա՞մ, հա՞մ, հա՞մ, հա՞մ,  
Քանի՞, ախաղե՞ր, գնամ ու զամ...  
Ասավ Քուչին ու նեղացած  
Վերադարձավ գլուխը բաց:



### *III*

Մին էլ եկավ, դարձյալ չկար.  
 Էս անգամը դիպան իրար.  
 Էլ անպատիվ, անկարզ խոսքեր,  
 Էլ իին ու նո՞ր, էլ հեր ու մե՞ր,  
 Էլ զող Փիսոն, էլ քաշալ Շուն...  
 Բանը հասավ դիվանքաշուն:  
 Շունը մինչև գնաց, եկավ,  
 Ուստա Կատուն կոտրն ընկավ  
 Գլուխն առավ ու մի զիշեր,  
 Հայդե՛, կորավ. Էն կորչիլն էր...

### *IV*

Էն օրվանից մինչև օրս էլ  
 Շունն էս բանը չի մոռացել.  
 Մարում իլա դեռ պահում ա,  
 Որտեղ կատվին պատահում ա,  
 Վեր ա բոչում վրա վազում,  
 Իրեն մորքին ետ ա ուզում.  
 Իսկ սև երես Կատուն հանկարծ  
 Ետ ա դառնում ու բարկացած  
 Փշտացնում ա. մքամ նոր եմ  
 Ցրցամ տվել, թե որ կարեմ:

<i>ճռճ</i>	- մորքուց, կաշվից հազուստ կարող
<i>որդիանց որդիի</i>	- որտեղից որտեղ
<i>ճանկել</i>	- բոցնել, ձեռք զցել
<i>ճմեռնամուտ</i>	- աշնան վերջը, ճմոան սկիզբը
<i>կուշար</i>	- մոտ
<i>բուրք</i>	- մուշտակ
<i>կուճի</i>	- զլուխ
<i>իրես</i>	- ահա, իինա
<i>մուշտարի</i>	- հաճախորդ
<i>վախտին</i>	- ժամանակին
<i>ցրցամ տալ</i>	- զուր ցանել, որ փափկի
<i>դիպան իրար</i>	- կովեցին, վիճեցին
<i>դիվանքաշի</i>	- դատավոր
<i>կոարծ ընկնել</i>	- աղքատանալ, սնանկանալ
<i>մքամ</i>	- իրը

Չարունակիր այնպես, իմշապես նմուշում է գրված:

Նմուշ՝ Են օրվանից մինչև օրս էլ  
Ծունճ էս բանը չի մոռացել,  
Դեռ հիշում է...

Են օրվանից մինչև օրս էլ  
Ծունճ էս բանը չի մոռացել  
Մոքում հլա դեռ պահում է.

Լուրջ-լուրջ ուստա կատվի շեմքում կանգնեց...  
Ծանր ու մեծ ուստա կատվի շեմքում կանգնեց...

Ու մուշտարու վրա գոռաց...

---

Սիրով, քեռի Քուչի...

---

Սառեցի՞ր... վա՛հ, տնաշեն...

---

Վայծիդի համար մի անհանգստանա...

---

Դուքս գրիր այն հատվածը, որտեղ կատուն սիրալիր է շան նկատմամբ:

---

---

---

---

---

---

---

Դուքս գրիր կատվի փախչելու մասին պատմող հատվածը:

---

---

---

---

---

Քո կարծիքով կատուն ինչպիսի՞ն է: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

---

---

---

---

---

Ծունն ինչպիսի՞ն է: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

---

---

---

---

---

Ծան անունից բողոք գրի՛ր կատվի դեմ:

---

---

---

## **Կատվի անունից արդարացիք:**

\_\_\_\_\_

«Ծունն ու կատուն» պատմիք մորքու անունից:

## ՉԱՐԻ ՎԵՐԶԸ

Լինում է մի սար,  
Են սարում մի ծառ,  
Են ծառում փշակ,  
Փշակում մի բուն,  
Բնում երեք ձագ,  
Ու վրեն Կկուն:

- Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկունե՛ր,  
Ե՛րք պիտի դուր առնեք թեր,  
Թռչե՛ք, գնար,  
Ուրախանար...

Երգում եք մարիկ Կկուն,  
Սին էլ, ըիր՝ Աղվեսն եկավ:

- Էս սարը իմն է,  
Էս ծառը իմն է,  
Ծառում փշակ կա,  
Փշակում՝ մի բուն,  
Էս ո՞վ է եկել  
Տիրացել քաքուն:

Այս դու Կկու, հիմա՛ր Կկու,  
Քանի՞ փոքրիկ ձագ՝ ունես դու:

- Երեք հատ ձագ, աղա Աղվես:  
- Երեք հատ ձագ ցույց կտամ թեզ:

Ու չե՞ս ասել, դու, անամոք,  
Սինը ծառա դրկես ինձ մոտ:

Զգի շուտով մի հատք ցած,  
Թե չէ՝ կացինս իրեն սրած,  
Գնամ թերեն,

Ծառը կտրեմ...  
- Վա՛յ, չկտրես,

Աստված սիրես,  
Էս մինն ահա

Տար թեզ ծառա,  
Սիայն թե եղաւ

Մի ջնջիլ մեզ  
Բնով-տեղով,

Ամրող ցեղով:

Խնդրեց մարիկ Կկուն ու ձագերից մինը ձգեց ներքի: Աղվեսը՝ հա՛փ, առավ գնաց:

Վայ-վա՛յ, դու-դո՛ւ,

Իմ լավ կուկու.

Ո՞ր սև սարում,



Ո՞ր անտառում,  
 Ո՞ր բժի տակ  
 Կորար մենակ...  
 Վայ-վայ, դու-դու,  
 Իմ խեղճ կուկու...  
 Լաց էր լինում մարիկ Կկուն, մին էլ, ըիթ, Աղվեսը  
 ետ եկավ:  
 - Էս սարը իմն է,  
 Էս ծառը իմն է,  
 Ծառում փշակ կա,  
 Փշակում՝ մի բուն,  
 Էս ո՞վ է եկել  
 Տիրացել քաքուն:  
 Այս դու Կկու, հիմար Կկու,  
 Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:  
 - Երկու հատ ձագ, աղա Աղվես:  
 - Երկու հատ ձագ ցույց կտամ քեզ:  
 Այս, չարամիտ դու ավագակ,  
 Ի՞նչ խարար է, երկո՞ւ հատ ձագ.  
 Ի՞նչ, ուզում ես էստեղ զոռով  
 Լցնես ամրող կկուներո՞վ...  
 Զգի շուտով մի հատը ցած,  
 Թե չէ կացինս իրեն սրած,  
 Գնամ քերեմ,  
 Ծառը-կտրեմ...  
 - Վայ, չկտրես,  
 Աստված սիրես,  
 Էս էլ առ տար,  
 Ու բող դադար  
 Վերջինը գեր  
 Մնա ինձ հետ...  
 Աղաչեց մարիկ Կկուն ու երկրորդ ձագն էլ ձգեց ներքի:  
 Աղվեսը՝ հա՛փ, էս էլ առավ ու զնաց:  
 - Վայ-վայ, վույ-վույ,  
 Ընչի՞ համար  
 Եկա ես սար,  
 Բուն շինեցի,  
 Զագ հանեցի...  
 Աղվեսն եկավ,  
 Տարավ, կերավ,  
 Երկու, երկու,  
 Կուկու... կուկու...  
 Լաց էր լինում մարիկ Կկուն:  
 Էս միջոցին - դա՛, դա՛, դա՛, Ազոավն անց էր կենում էն կողմերով: Լսեց  
 Կկվի լացի ձայնը:  
 Եղպես տխուր ու զարհուրիկ

Ի՞նչ ես լալիս, Կկու քուրիկ:  
 - Ինչպես չլամ, ա' սանամեր.  
 Աղվեսն եկավ էն սրտամեռ,  
 Գլսիս եսպես փորձանք բերավ,  
 Զագուկներս տարավ, կերավ:  
 - Վո՞ւ իմ աչքին, անխելք Կկու,  
 Ինչպես իզուր խարվել ես դու  
 Սուտ խոսքերից չար Աղվեսի:  
 Ո՞նց թե սարը իմն է՝ կասի:  
 Ո՞վ է տվել էն լրբին սար.  
 Սարն ամենքիս է հավասար...  
 Ո՞վ կրողնի վեր կենա նա  
 Ամբողջ սարին զա տիրանա,  
 Անունը տա սրած կացնի,  
 Սրան-նրան սուտ վախեցնի,  
 Ու մինն էսօր, մյուսը երեկ,  
 Զագեր տանի, ուտի մեկ-մեկ...  
 Սև գրողի էն տարածին  
 Ո՞վ է տվել սրած կացին:  
 Մին էլ որ զա ու սպառնա,  
 Մի՛ վախենա, քշի զնա:  
 Էսպես ասավ Ազռավն ու քավ զնաց: Ահա կրկին  
 Աղվեսն եկավ:  
 - Էս սարը իմն է,  
 Էս ծառը իմն է...  
 Հազիվ էր ասել, Կկուն քնից գլուխը հանեց՝  
 - Սուտ ես ասում, դու խարերա,  
 Անխիղճ գազան, անկուշտ, ազահ:  
 Ո՞վ է տվել էստեղ քեզ սար,  
 Սարն ամենքիս է հավասար:  
 Ի՞նչ ես եկել սուտ տեր դարձել,  
 Ես էլ հիմար՝ ճիշտ եմ կարծել,  
 Զագուկներս տվել եմ քեզ...  
 Կորի՛, զնա, դու չար Աղվես,  
 Հերից ինչքան սուտ ես ասել,  
 Հիմի գիտեմ, չեմ վախում էլ.  
 Կացին չունես ծառը կտրես:  
 - Ո՞վ ասավ քեզ:  
 - Ազռավն ասավ:  
 - Ազռա՞վը, լա՞վ:

Ու Ազռավի վրա բարկացած Աղվեսը պոչը քաշեց,  
 հեռացավ: Գնաց մի դաշտում սուտմեռուկի տվավ,  
 վեր ընկավ, իբրև թե սատկել է: Ազռավն էլ կարծեց՝  
 իրավ սատկել է, քռավ եկավ վրեն իջավ, որ աչքերը  
 հանի: Աղվեսը՝ հա՛փ, հանկարծ քոնեց:  
 - Ղա՛ - դա՛ - դա՛ - դա՛,

Աղվես աղա...

- Այ դու կռավան չարալեզու,  
Ո՞նց քե Կկվին ասել ես դու,  
Թե ես կացին չունեմ սրած...  
Կացին չունեմ... դե հիմի կաց...  
- Վայ, քեզ մեղա,  
Աղվես աղա,  
Ես եմ ասել, չեմ ուրանում,  
Ինձ քրքրի, ինձ կեր հում-հում,  
Տուր, ինչ պատիժ սիրտդ կուզի,  
Բայց մի վերջին խոսք լսի:  
Ես էն սարում, ինց դեմուղեմ,  
Էնակես մի բանկ պահուսա ունեմ,  
Որ չես գտնի դու քո օրում  
Ոչ մի բառում կամ անտառում:  
Ընչի՞ համար էն ահազին  
Գանձը կորչի հողի տակին:  
Արի գնանք. հանեմ տամ քեզ,  
Էնքան ուտե՞ս, էնքան ուտե՞ս...  
Թե շինի ու սուս դուրս գամ,  
Ես հո էստեղ միշտ կամ ու կամ...

- Գնա՞նք, ասավ Աղվեսը: Թե կլինի, շատ լավ, քե չի լինի, էլի քեզ կուտեմ:  
Գնացին:  
Վերիից քշելիս Ագռավը նկատել էր, որ մի բփում պառկած էր զյուղացու  
շունը: Աղվեսին տարավ, տարավ, դուրս քերավ ուղիղ էն բփի վրա:  
- Այ, ասեց, ևս բփումն է իմ պահուսաք:  
Աղվեսն ագահ վրա ընկավ բփին. շունը վեր բռավ, կոկորդից բռնեց ու դրեց  
տակին: Աղվեսը խեղդվելով սկսավ խոխոալ.  
- Ալս, ե՞ս... ա՞խ, ե՞ս...  
Զգույշ Աղվես,  
Փորձանքի մեջ  
Ընկնեմ էսպե՞ս...  
Ալս՝, անիրա՞վ  
Դու սև Ագռավ...  
- Ինչքան լի որ լինիս զգույշ,  
Զարի համար քե վաղ, քե ուշ,  
Էղ է պահված, Աղվես աղա,  
Ղա՞՝, դա՞՝, դա՞՝, դա՞...  
Պատասխանեց Ագռավն ու բռավ:

<b>փշակ</b>	- ծառի բնի մեջ առաջացած խոռոչ
<b>տիրանալ</b>	- ուժով տեր դառնալ
<b>շարամիտ</b>	- շար միտք ունեցող
<b>սպառնալ</b>	- վախեցնել, ահ տալ
<b>գեր</b>	- գոնեն
<b>ևս միջոցին</b>	- այս ժամանակ
<b>զարհուրիկ</b>	- վախեցած, վախվորած
<b>իրավ</b>	- ճիշտ, իսկապես
<b>կռավան</b>	- կռկռան
<b>պահուստ</b>	- պահված որևէ քան
<b>պոչը քաշել</b>	- քողնել հեռանալ

*Գրիք այնպես, ինչպես «Զարի վերջում» է.*

*Ե՞րբ պիտի դուք քոչել սովորեք...*

*Ի՞նչ ես եկել, սուտ տեր դարձել քաքուն...*

*Ինձ փորձանքի մեջ զցեց...*

*Մին էլ որ զա ու վախեցնի...*

*Ահ զրոյի էն տարածին  
Որտեղից սրած կացին...*

*Տուիր, ինչ պատիւ որ գանկանաս...*

*Վերջինը միայն մնա ինձ հետ...*

Աղվեսի խոսքերում Կկուն ինչպիսի՞ն է. զտի՛ր և զրի՛ր այդ հատվածները:

Նմուշ՝ Այս դու Կկուն, հիմա՞ր Կկուն:

---

---

---

Կկվի կարծիքով Աղվեսն ինչպիսի՞ն է. զտի՛ր այդ տողերը և զրի՛ր:

Նմուշ՝ Կորի՛, զնա՛, դու չար Աղվես:

---

---

---

Քո կարծիքով ինչպիսի՞ն են՝

Աղվեսը

---

---

---

Կկուն

---

---

---

Ինչպե՞ս ես հասկանում.

- Ինչքան էլ որ լինես զգույշ,  
Չարի համար թե վաղ, թե ուշ,  
Եղ է պահված, Աղվես աղա...

---

---

---

Խորհուրդ սոո՛ր

ա) Կկվիճ

բ) Աղվեսին

Աղվեսին պատժելուց հետո Ազուազն ի՞նչ կպատմի Կկվիճ:

# ՄՈՒԿԻԿԻ ՄԱՌԵ

Ծիտիկն ու Մուկիկն ախապերացան։ Գետի ափին քուն շինեցին, մտան մեջը։

Մի օր Ծիտը գնաց քուզուց անելու, ետ եկավ տեսավ Մուկիկը մեռել է։ Ծնկանը զարկեց։

- Վա՞յ, ախապեր ջան, վա՞յ...

Օխտը ճամփի մեջտեղ նստեց, հողը փորեց, տվավ գլխին.

- Վա՞յ, ախապեր ջան, վա՞յ...

Զենի վրա Լորիկն եկավ.

- Ծիտիկ-միտիկ, չալփետուրիկ,

Հողն ինչո՞ւ ես տալի գլխիդ։

- Թառ՝ թառ՝, - ասաց Ծիտը,-

Ես որ չտամ, ո՞վ տա հապա.

Մուկիկի պես ախապեր մեռավ,

Աշխարհըն էսպես մնաց անտեր,

Ես որ հողը տամ իմ գլխին,

Մե՞ծ բան է...

- Ափսո՞ս, ափսո՞ս, - ասավ Լորը,-

Մուկիկի պես մարդը մեռավ,-

Ասավ, իրեն էնքան զարկեց,

Թեր կոտրեց կախ արավ։

Ծառը ասավ.

- Լորիկ քուրիկ, ճաճտուրիկ,

Ինչո՞ւ ես մի թեդ կոտրել։

- Բա ի՞նչ անեմ, որ չկոտրեմ։

Մուկիկի պես մարդը մեռավ,

Աշխարհըն էսպես մնաց ահտեր։

Ծիար գլխին հոդ է, տալի,

Ես որ իմ մի թեդ կոտրեմ

Մե՞ծ բան է...

- Այս-վախ, ախ-վախ, - կանչեց ծառը.

Մուկիկի պես մարդը մեռնի՞...

Գնաց եկավ, գնաց եկավ,

Իր ճյուղերը զարկեց իրար,

Զարդեց, մնաց ճյնակոտը։

Զարերն ասին.

- Ծառիկ-մառիկ, կանաչ թառիկ,

Ճյուղերդ ինչո՞ւ վեր քափեցիր։

- Վա՞հ, ձեր տունը Աստված շինի,

Մուկիկի պես մարդը մեռավ,

Աշխարհըն էսպես մնաց անտեր։

Ծիտիկն էնտեղ հողը գլխին,

Լորը իրեն թեդ կոտրած,



Իմ ճյուղերը ես որ քափեմ՝

Սե՞ծ քան է...

- Հազար ափսո՞ս, - քարերն ասին.

Մուկիկի պես մարդը մեռավ,

Ու գոռալեն, գոգոռալեն

Գլորվեցին սարերն ի վար,

Թափվեցին ցած՝ ջրերի մեջ:

Ջրերն ասին.

- Ի՞նչ պատահեց, այ զիժ քարեր,

Չե՞ դուք ձեր տեղն անժած էիք,

Ի՞նչ եք էղպես ցած գլորվում:

Ել ի՞նչ անժած. քա չե՞ք ասիլ

Մուկիկի պես մարդը մեռավ,

Աշխարհըն էսպես մնաց անտեր.

Ծիտիկն էնտեղ հողը գլխին,

Լորիկն իրեն թիզ կոտրած,

Ծառը մնաց ճղնակոտոր,

Մենք մեր տեղից որ գլորվենք՝

Սե՞ծ քան է...

- Վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛շ, ի՞նչ իմացանք,

Մուկիկի պես մարդն էլ մեռնի՞...

Ջրերն ասին. խառնվեցին,

Ու զնացին պղտոր-մղտոր:

Էն կողմերից տմբտմբալով

Պառավն եկավ: Ես որ տեսավ.

- Այ զգլան ջրեր, - ասավ,

Դուք պարզ էիք միշտ ու մարմանդ,

Ինչո՞ւ էսօր պղտորվեցիք:

- Վա՛յ քու տունը քանդվի, պառա՛վ,

Բա չե՞ս լսել՝ ինչ է եղել.

Մուկիկի պես մարդը մեռավ,

Աշխարհըն էսպես մնաց անտեր.

Ծիտը էնտեղ հողը գլխին,

Լորը իրեն՝թիզ կոտրած,

Ծառը եղավ ճղնակոտոր,

Քարերը ցած՝ զլտոր-մլտոր,

Մենք պղտորվենք՝ մե՞ծ քան է...

- Հողն իմ գլխին, - պառավն ասավ, -

Մուկիկի պես մարդը մեռնի՞...

Զարկեց իրեն ու ծվատեց,

Երեսն արավ արյունլվիկ,

Մազաքձուձ՝ զյուղը վազեց:

Գյուղում ասին.

- Պառավ տատիկ. ի՞նչ պատահեց,

Ինչո՞ւ երեսդ արյունլվիկ:

- Վա՛յ, քոռանամ, մի՛ խոսեցնեք:

Մուկիկի պես մարդը մեռավ,  
 Աշխարհըն էսպես մնաց անտեր.  
 Ծիտը էնտեղ հողը գլխին,  
 Լորը իրեն թևը կոտրած,  
 Ծառը եղավ ճղնակոտոր,  
 Քարերը ցած զլտոր-մլտոր,  
 Ես իմ երեսն արյունոտեմ՝  
 Մե՞ծ քան է...  
 - Ափսո՞ս, ափսո՞ս, հազար ափսո՞ս,  
 Որ էն տեսակ մարդը մեռավ...  
 Ափսոսացին էն գյուղացիք,  
 Սև կապեցին, սուզ նստեցին.  
 - Վա՞յ, ո՞վ ասավ, ո՞վ ասավ...  
 - Հողագլուխ Ծիտիկն ասավ,  
 Թևը կոտրած Լորիկն ասավ,  
 Ճղնակոտոր Ծառիկն ասավ,  
 Գլտոր-մլտոր Քարիկն ասավ,  
 Պղտոր-մղտոր Ջրիկն ասավ,  
 Մազաքձուծ Պառվիկն ասավ,  
 Մեր Մուկիկը մեռել է...  
 Էլ ո՞վ մնաց էս աշխարհում,  
 Էլ ի՞նչ ապրենք էս աշխարհում,  
 Էսպես ասին  
 Ու միասին  
 Լացով, կոծով,  
 ճիշ-զոռոցով  
 Հավաքվեցին ու գնացին,  
 Քարիցն ընկան կոտորվեցին:

<i>անժառ</i>	- անշարժ
<i>ճղնակոտոր</i>	- ճյուղերը կոտրված
<i>մարմանդ</i>	- մեղմ, համարտ, բոյլ
<i>մազաքձուծ</i>	- մազերը խառնած, զզզված

Չալփետուրիկ, ճտճտուրիկ, կանաչ քառիկ, գլուխան, պարզ, մարմանդ, արյունլվիկ, թևը կոտրած, գլտոր-մլտոր, պղտոր-մղտոր, մազաքձուծ քառերը դի՛ք ճիշտ տեղերում:

Նմուշ՝ չալփետուրիկ ծիտիկ-միտիկ  
կանաչ քառիկ ծառիկ

Երես \_\_\_\_\_ Լորիկ քուրիկ

Զրեր \_\_\_\_\_ բարիկ

Զրիկ \_\_\_\_\_ պառվիկ

Թշվարկի՛ր «Սուկիկի մահը» ստեղծագործության հերոսներին:

Ի՞նչ արեցին, երբ լսեցին մկան մահվան լուրը.

Ծիտը հողը փորեց, տվեց զլիսին,

Լորիկը \_\_\_\_\_

Ծառը \_\_\_\_\_

Քարերը \_\_\_\_\_

Զրերը \_\_\_\_\_

Պառավը \_\_\_\_\_

Եթե հանդիպես այս պատմության հերոսներին, ի՞նչ խորհուրդ կտաս:

Այս պատմության մասին փոքրիկ հայտարարություն գրի՛ր՝ լրագրում տպագրելու համար:

# ԹՈՒՅՊՈՒՅ ՄՈՒԿԻԿԸ

Մի երկիր կա՝ Հնդստան,  
Մի մուկիկ կար՝ ճստճստան,  
Հնդստանի անտառում,  
Կոկոս ծառի ծակուռում:

Ապրում էր նա իր համար  
Բարիքներում անհամար,  
Ու մի օր լավ, մի օր վատ՝  
Ուներ ապրուստ քիչ քե շատ:

Օրը մի ճանճ, մի միջատ,  
Մի ծեղ, արմատ, ցորնի հատ  
Ուտում էր ու քեֆ անում,  
Խաղում, ապրում իր քնում:

Իր անունը Պույպույ էր,  
Ազգանունը Ծստունի:  
Լաց՝ վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ էր,  
Երգը՝ տարայ-նա՛յ-նի՛-նի՛:

Էսպես մուկիկն ապրում էր,  
Վազվելով վար ու վեր,  
Ու մի օր էլ ծանր ու մեծ  
Երեն-իրեն միտք արեց.

«Տունս կոկոս ծառի տակ,  
Բերան չունե՞մ, քե՞ ճաշակ.  
Ծանճ կերել եմ, ծեղ կերել,  
Տեսնեմ կոկոսի համն էլ»:


Այս ասելն էր, մեկ էլ, դո՛մփ,  
Ծառից կոկոսն ինչպես բռնք  
Ընկավ նրա առաջին:  
Կոկո՞ս, կաղին չէ չնչին:

Կաղնի տեսակ, սեխի չափ,  
Միջուկն անո՞ւշ, յուղալի՝,  
Բայց կեղևն է միայն հաստ,  
Ահա ինչն է ցավալի...

Վրա ընկավ մուկիկը,  
Բացեց սուր-սուր ճանկերը  
Կեղև հաստ է, ո՞նց անի  
Ու սկսեց վույ-վույը:

«Ախր ի՞նչ է, ի՞նչ կըլի,  
Տեսնեմ դրա համն էլի՝  
Մի քիչ կոկոս, մի քիչ ջուր,  
Գոնե մի կում, մի պուճուր»:

Դու մի ասի՝ ընկնելուց  
Ծակ էր բացվել կոկոսում,  
Եղ որ տեսավ, իիմի էլ  
Ծակից մտնել էր ուզում:



Բայց տեսեր ինչ պատահեց.  
Ծակն էր պստիկ, ինքը՝ մեծ:  
Ծակից ներս չի մտնում,  
Սովոր էլ ուշքն է գնում:

Լաց է լինում մուկիկը...  
Ո՞նց լաց չըլնի մուկիկը...  
Սիրտն ուրիշ բան չի ուզում,  
Նայում է ու նվազում:

Էսպես լացեց, սուզ արեց,  
Էնքան լացեց, սուզ արեց,  
Հետն էլ սովից լդարեց:

Որ լդարեց, բարակեց,  
Մեկ էլ, ըիը՝, ճանճի պես  
Ծակից մտավ, զնաց ներս:

Էս ի՞նչ էր, տո՛, ո՞նց եղավ,  
Էս ծակից ո՞նց ներս մտավ,  
Ո՞նց, ա՛յ, նայի՛ր, էս՝ մուկը,  
Էս՝ կոկոսն ու միջուկը:

Դե, քեֆ արա, օխա՛յ-օխա՛յ,  
Դե, պար արի, տարա՛յ, նանա՛,  
Դե, միջուկը կե՛ր ու կրծի՛ր,  
Կե՛ր միջուկը, հյուրը խմի՛ր:

Հա՛մ ուտում է, հա՛մ էլ պարում,  
Հա՛մ պարում է, հա՛մ էլ երգում.  
«Ինքս Պույպոյ, պարս՝ տույտոյ,  
Էլ ի՞նչ վայ-վայ, էլ ի՞նչ վույ-վոյ»:

Էսպես քոչում, ծափ էր տալիս,  
Պար էր գալիս, ուանգի, յայլի,  
Գոռում էր, ջա՛ն, տարայ-նի-նի,  
Ա՛յ քե քեֆը ինչպես կըլնի:

Էս որ էսպես կերավ, մաքրեց,  
Առաջ փոքր էր, հիմա տողեց,  
Տողեց, դարձավ խոշոր մի մուկ,  
Ըսկավ կողքին, քնեց խորունկ:

Մեկ օր անցավ, եկավ նոր օր,  
Ե՞հ, մուկիկը վեր կացավ, որ  
Փուշ կոկոսի ծակից դուրս գա,  
Այսր դուրսը գործ կա, տուն կա:

«Լավ էք, կերանք բավականին,  
Հիմա գնանք մենք մեր բանին»:  
Հեշտ էք ասել... Ապա փորձիր,  
Մի կոկոսի ծակից անցիր:

Մոտեցավ, որ ծակից դուրս գա,  
Պահո՞... Տեսավ ճամփա չկա,  
Ինքը խոշոր, ծակը պուճոր...  
Այդ է՝ մնաց, բայց մնա ո՞ւր...

Լաց է լինում մուկիկը:  
Ո՞նց լաց չըլնի մուկիկը:  
Տոզել է կոկոսում,  
Մնացել է նեղ փոսում:

Այսր ի՞նչ բան ունեիր,  
Գայիր կոկոս ուտեիր,  
Չոռ ուտեիր՝ լավ չէ՞ր, իր՝,  
Ցավ ուտեիր, լավ չէ՞ր, իր՝...

«Վա՞յ, վա՞յ, վա՞յ, վա՞յ, - զահրումա՞ր,  
Դե լաց, մնա քեզ համար»:  
Էսպես լացեց մուկիկը.  
Էնքան լացեց մուկիկը,

Հետն էլ սովից լդարեց:  
Որ լդարեց, բարակեց,  
Մեկ էլ, ըիը՝, սուս ու փուս  
Ծակից նորից ելավ դուրս:

Վա՞հ, էս ինչ էք, էս ո՞նց եղավ,  
Բա էս ծակից ո՞նց դուրս եկավ,  
Ո՞նց... ա՞յ, նայի՛ր, էս ես՝ մուկը,  
Է՞ս՝ կոկոսը, է՞ս՝ միջուկը:

Տեսա՞ր լավ բան, կեցցե՞ս Պույպոյ,  
Տո՛, էլ ի՞նչ «վայ», էլ ի՞նչ «վույ-վույ»,  
Տո՛, քեֆ արա, օխա՞յ, օխա՞յ,  
Դե, պա՞ր արի, տարա՞յ-նի-նայ...

Հա՞մ քոչում է, հա՞մ պարում է,  
Հա՞մ երգում է, հա՞մ կանչում է,  
Զա՞ն, քե՞ֆ արա, տարայ-նի-նի՝,  
Այ թե քեֆը ինչպես կըլնի:

- կոկոս - արևադարձային բույս  
ծակուռ - փշակ  
բոմբ - ռումբ  
ապրուստ - ապրելու միջոց  
ծեղ - չոր խոտ  
նվազել - քշանալ, պակասել, քարակել, բուլանալ  
լղարել - նիհարել  
ռանզի, յայլի - պարի տեսակներ  
տողել - զիրանալ, փրփել

Գտի՛ր և դո՛ւրս գրիր համապատասխան հատվածները:

Նմուշ՝ Բարիքներում անթիվ, անհաշիվ: Բարիքներում անհամար:

Հենց ասաց, մեկ էլ, դո՞մի,

Կոկոսը բռնքի նման ընկավ նրա առջե:

---

Փակագծերում գրված բառերից ու արտահայտություններից ընտրի՛ր  
մեկը և գրի՛ր իր տեղում.

Ծակից ներս չի մտնում,

Սովոր էլ \_\_\_\_\_:

(ուշաբափկում է, ուշըն է զնում)

Սիրտն ուրիշ բան չի հոգում,

Նայում է ու \_\_\_\_\_:

(բարակում, նիհարում, նվազում)

Որ լարեց, բարակեց,

Մեկ էլ, ըհը՛, \_\_\_\_\_

Ծակից մտավ, զնաց ներս:

(ոնց որ ճանձ, ինչպես ճանձ, ճանճի պես)

Ուսում էր ու \_\_\_\_\_

Խաղում, ապրում իր քնում:

(ուրախանում, քեֆ անում)

Ու մի օր էլ \_\_\_\_\_

Իրեն-իրեն միտք արեց:

(լուրջ-լուրջ, ծանր ու մեծ)

Նկարի՛ր, նկարների կողքը զրի՛ր համապատասխան հատվածները:

Կոկոսն ընկել է

Այս ասելն էր, մեկ էլ, դո՞ւմփ,

Ծառից կոկոսն ինչպես բռնը

Հնկավ նրա առաջին:

Կոկո՞ս, կաղին չէ չնշին:

Մուկը ճանկում է

---

---

---

Մուկը լալիս է կոկոսի կողքին

---

---

---

Մուկը պարում է կոկոսի մեջ,

---

---

---

Մուկը ընկել է կոկոսի տակ

---

---

---

*Մուկը մոտեցել է, որ ծակից դուրս գա*

Մուկը նիհարած պարում է կոկոսի կողքը

Ծարունակի ը պատմել կոկոսի անունից.

Ես աճում էի բարձր ծառի վրա: Ինձ ոչ ոք չէր բաղում: Այնքան հասա, որ մի օր էլ ծառից ընկած: Մեկ էլ մի մուկ մոտեցավ ինձ:

Պատմիք Պույ - պույի մասին՝

ա) մինչև կոկոսի ընկնելը

բ) կոկոսից դուրս գալուց հետո

Դուրս գրիր ամենաուրախ հատվածը:

Այս խորհուրդներից ո՞րը կտաս Պույ - պույին՝ ընդգծիք.

Ծառ լսիք, քիչ խոսիք:

Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի կեր:

Մտնելուց առաջ մտածիք, քե ինչպես ես դուրս գալու:

Պույ - պույի անունից բոլորին իրավիրիք՝ նշելու կոկոսից դուրս գալը:

## ԳՆԴԻԿ-ԲՈՉՈՆԻԿ

Լինում են, չեն լինում մի պառավ ու մի ծերուկ են լինում: Մի օր ծերուկը պառավին խնդրում է:

- Պառավ ջան, մի գնդիկ-բոքոնիկ թխիր:

- Ինչո՞վ թխեմ, ալյուր չունենք:

- Ե՛, պառավ ջան, տաշտակը քերիր, մեջը ավլիր, կարող է մի բան դուրս գա:

Պառավը վերցնում է սագի թևիկը, տաշտակը քերում-քերքրում, մեջը ավլում, հավաքում է մի բուռ ալյուր:

Թխում է պառավը մի գնդիկ - բոքոնիկ, դնում պատուհանի գոգին, որ սառի:

Գնդիկ-բոքոնիկը մնում է մնում ու հանկարծ լուսամուտից զլորվում նստարանին, նստարանից՝ հատակին, հատակից փրայով՝ դեպի դուռը, շեմքից ցատկում է նախասենյակ, նախասենյակից՝ զլորվում քակ, այստեղից դուրս է քոչում ու զլորվում ճանապարհով:

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը ճանապարհով, դեմն է դուրս գալիս մի նապաստակ:

- Գնդիկ-բոքոնիկ, գնդիկ-բոքոնիկ, ես քեզ կուտեմ:

- Մի՛ կեր ինձ, շլդիկ նապաստակ, իսկ ես քեզ համար մի երգ կասեմ,- ու երգում է.

«Գնդիկ-բոքոնիկն եմ ես, տաշտակից քերված, կողքերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած: Ես տատիկից փախել եմ, ես պապիկից փախել եմ, բապաստակից փախել եմ, քեզնից փախչելն ի՞նչ է որ...»:

Ու գնում է իր ճամփան գնդիկ-բոքոնիկը, կորչում նապաստակի աչքից:

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, զլորվում, մեկ էլ դեմն է դուրս գալիս գայլը:

- Գնդիկ-բոքոնիկ, գնդիկ-բոքոնիկ, ես քեզ պիտի ուտեմ:

- Մի՛ կեր ինձ, գո՞րշ գայլուկ, իսկ ես քեզ համար մի երգ կասեմ. «Գնդիկ-բոքոնիկն եմ ես, տաշտակից քերված, կողքերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած: Ես պապիկից փախել եմ, ես տատիկից փախել եմ, բապաստակից փախել եմ, քեզնից փախչելն ի՞նչ է որ....»:

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, կորչում գորշ գայլի աչքից:

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, զլորվում, հանկարծ դեմն է դուրս գալիս արջը:

- Գնդիկ-բոքոնիկ, գնդիկ-բոքոնիկ, ես քեզ պիտի ուտեմ:

- Ինձ մի՛ կեր, ծուռքար արջ, իսկ ես քեզ համար երգ կասեմ,- ու երգում է. «Գնդիկ- բոքոնիկն եմ ես, տաշտակից քերված, կողքերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած: Ես պապիկից փախել եմ, ես տատիկից փախել եմ, բապաստակից փա-



խել եմ, ես գորշ գայլից փախել եմ, քեզնից փախչելն ի՞նչ է որ...»:

Գլորվում է գնդիկ-բորոնիկը, կորչում արջի աչքից:

Գլորվում է գնդիկ-բորոնիկը, գլորվում, ու հանկարծ դեմն է դուրս գալիս աղվեսը:

- Բարե, գնդիկ-բորոնիկ, ես ի՞նչ լավիկն ես:

Իսկ գնդիկ-բորոնիկը երգում է. «Գնդիկ-բորոնիկն եմ ես, տաշտակից քերված, կոռպերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած: Ես պապիկից փախել եմ, ես տատիկից փախել եմ, նապաստակից փախել եմ, գորշ գայլուկից փախել եմ, ծուռքաք արջից փախել եմ, քեզնից փախչելն ի՞նչ է որ...»:

- Եղ ինչ լավ երգ է,- ասում է աղվեսը: - Ավսոս՝ ես պառավել եմ, լավ չեմ լսում: Նստի՛ր, խնդրում եմ, քրիս ու մեկ էլ երգիր, մի՛ քիչ բարձր:

Գնդիկ-բորոնիկը քոչում է աղվեսի քրին ու երգում նույն երգը:

- Շնորհակալ եմ, գնդիկ-բորոնիկ, շատ լավ երգ է: Ես մեկ էլ կուգեի լսել: Նստի՛ր, խնդրում եմ, լեզվիս ու երգիր վերջին անգամ,- ասում է աղվեսն ու հանում լեզուն:

Գնդիկ-բորոնիկը իմմարի նման քոչում է աղվեսի լեզվին, իսկ աղվեսը՝ հափ ու կուլ է տալիս խեղճ գնդիկ-բորոնիկին:

**Հեքիարից դուրս գրիր այն նախադասությունները, որոնք կփոխարինեն  
տրված օրինակներին:**

Նմուշ՝ Ու նորից զլորվում է բորբնիկը. նապաստակը նրան էլ չի տեսնում:

Ու նորից զլորվում է գնդիկ-բորբնիկը, կորչում նապաստակի աչքից:

Գլորվում է գնդիկ-բորբնիկը, զլորվում, հանդիպում է արջին:

---

---

*Ինձ մի՛ կեր ծուոքաբ արջ, իսկ ես քեզ համար կերգեմ:*

---

---

*Ափսո՞ս՝ ես պառավել եմ. ականջներս ծանրացել են:*

---

---

*Պատմի՛ր գնդիկ-բորբնիկի մասին:*

---

---

*Նկարի՛ր գնդիկ-բորբնիկին և նկարագրի՛ր քո նկարածը (քշիկները, աչքերը, բերանը, ականջները...):*

---

---

---

---

*Քո կարծիքով հեքիարի կենդանիներն ինչպիսի՞ն են:*

---

---

---

Հերիարի որևէ հատված նկարի՞ր և տո՛ր կողքու նստողին, որ գուշակի և դուրս գրի այդ հատվածը:

---

---

---

---

---

Առջի անունից պատմի՞ր իր և բոքոնիկի հանդիպման մասին:

---

---

---

---

---

Աղվեսի անունից նամակ գրի՞ր տատիկին և պապիկին:

---

---

---

---

---

Փորձի՞ր տատիկի և պապիկի անունից հայտարարություն տալ բոքոնիկի կորչելու մասին:

---

---

---

---

---

Եթե դու աղվեսը լինեիր, ի՞նչ կերգեիր զնդիկ-բոքոնիկին ուտելուց հետո:

---

---

---

---

---

# ՄԹԻՑ ՎԱԽԵՑՈՂ ՓՈՁՐԻԿ ԱՎՏՈԲՈՒՏԸ

Աշխարհում մի փոքրիկ ավտոբուս կար: Նա կարմիր-կարմիր էր և հայրիկի ու մայրիկի հետ ապրում էր ավտոկայանում: Ամեն առավոտ երեքով լվացվում էին, բենզին, յուղ ու ջուր վերցնում և ուղևորներին գյուղից տանում ծովի մոտ գտնվող մեծ քաղաքը, այնտեղից էլ գյուղ բերում:

Այսպես ամբողջ օրը՝ տանում էին, բերում, տանում-բերում: Եթե մուրն ընկնում էր, փոքրիկ ավտոբուսը ոչ մի տեղ չէր գնում: Այսր ավտոբուսիկը շատ էր վախենում մրից: Մի օր մայրն ասաց.

- Մի բան պատմեմ, լսի՛ր: Շատ առաջ մուրը վախենում էր ավտոբուսներից: Մի անգամ Մուր մայրիկն ասաց նրան:

- Վախենալու ոչինչ չկա: Եթե վախենաս, երեկոյան դուրս չգաս աշխարհը ծածկելու, մարդիկ այդպես էլ չեն իմանա, որ բնելու ժամանակն է: Աստղերն էլ չեն իմանա, որ արդեն պիտի լուսավորեն երկիրը: Պետք է համարձակ լինել:



Ամբողջ ցերեկը մուրը քարնվեց արևի ետևում, հետո կամաց-կամաց իշավ փողոցների և տների վրա: Քաղաքում ավտորուսներն այստեղ-այստեղ էին գնում: Մուրն էլ չեր վախենում ու մի քիչ էլ ներքև իշավ: Փողոցում վառվեցին լույսերը, վարորդներն էլ իրենց մերենաների լույսերը վառվեցին:

Վերջապես մուրը լրիվ ծածկեց ամբողջ քաղաքը և չէր հասցրել ուշքի զալ, երբ քարձը սուլելով մի ավտորուս անցավ նրա միջնվ: Այ քեզ քա՞ն, ինչ անսպասելի էր: Մրանը դա դուր եկավ, մի քիչ խուտուտ տվեց, բայց շատ հաճելի էր:

Հետո մրան միջով էլի ավտորուսներ անցան: Նրանց մեջ լույս էր վառվում, մարդիկ տոմս էին գնում, նստում, կանգնում. մի խոսքով՝ ժամանակը շատ լավ էին անցկացնում:

Հետո, երբ լուսինը դուրս եկավ, մուրը տների հետ պահմտոցի խաղաց:

Առավոտյան արևնացավ ու մրանն աւղարկեց տուն՝ մայրիկի մոտ: Հիմա մուրը ավտորուսներից չի վախենում:

Երբ մայր ավտորուսի պատմությունն ավարտվեց, փոքրիկ ավտորուսն ասաց.

- Լավ, կգնամ:

Վարորդը եկավ, միացրեց շարժիչը, վառեց լույսը, մարդիկ նստեցին, և փոքրիկ ավտորուսը մրան միջով գնաց ուղիղ ծռվափի քաղաքը:

## Վերնագրիք

Մի փոքրիկ ավտորուս շատ էր վախենում մրից: Երբ մուրճ ընկնում էր, նա դուրս չէր զայիս ավտոկայանից: Մի օր մայրը նրան պատմեց ավտորուսից վախեցող մրան մասին:

Շատ առաջ մուրք վախենում էր ավտորուսներից: Մայրը մի անգամ ասաց, որ եթե մուրք չիջնի, չծածկի աշխարհը, մարդիկ չեն իմանա, որ քննելու ժամանակն է, աստղերը չեն լուսավորի աշխարհը:

Հիմա ի՞նքո՞ւ շարունակիր համառոտ պատմել:

Մուրք քաղաքում

Դու մրից վախենո՞ւմ ես. ի՞նչո՞ւ:

Զո կարծիքով ի՞նչ կա մրան մեջ:

# ՄՈՌԱՑՎԱԾ ԾՆՍԴՅԱՆ ՕՐԸ

Կար-չկար մի մեծ փիղ կար: Այս փիղն իր կնոջ ու Յալմար անունով տղայի հետ ապրում էր գազանանցում:

Հայր փիղը շատ մեծ էր: Մայր փիղն էլ էր մեծ: Դե, Յալմարն էլ շատ փոքր չէր: Փղերն ընդհանրապես փոքր լինո՞ւմ են:


Մի սիրուն օր փիղ մայրիկն ու փղիկը տևսան, որ փիղ հայրիկը կանգնել է զլլսի վրա:

- Ի՞նչ ես անում,- հարցրեց փիղ մայրիկը:
- Մի բան եմ ուզում հիշել,- պատասխանեց փիղ հայրիկը:
- Ի՞նչ ես ուզում հիշել:
- Որ իմանայի, էլ ինչո՞ւ էի չարչարվում,- պատասխանեց փիղ հայրիկը: - Ծիշտ չե՞մ ասում:
- Յալմա՛ր,- ասաց փիղ մայրիկը տղային,- շուտ վազի՛ր ու իմացի՛ր՝ ի՞նչ է մոռացել հայրի:

Ու Յալմարը ճամփով վազեց: Հետո եղեգնութի կողքի փոքր բլուրը բարձրացավ ու նստեց, որ հանգստանա, հետն էլ նայի, թե ո՞նց են ամպերը երկնքում խաղում:

Հանկարծ լսեց, որ մեկը լաց է լինում: Հենց իր կողքին էին լաց լինում, բայց Յալմարը չէր տեսնում, թե ով է ու ասաց.

- Լաց մի՛ լինի, ուզո՞ւմ ես՝ օգնեմ քեզ:
- Լացը դադարեց:



- Դու ո՞վ ես,- հարցրեց Յալմարը:
- Մոռացված Ծննդյան օրն եմ: Չգիտեմ իլ, թե ո՞ւմն եմ:
- Վա՞յ,- ասաց Յալմարը,- ա՞յ քեզ քան: Իսկ տորք ունե՞ս:
- Բա ո՞նց: Առանց տորքի՝ ի՞նչ ծնունդ: Իմ տորքի վրա վեց մոմ կա, ուրեմն ինչ-որ մեկն այսօր վեց տարեկան է դառնում:

«Ի՞նչ լավ է,- մտածեց Յալմարը,- շատ լավ է: Համարյա յոր տարեկան դառնալու չափ լավ: Հինգ տարեկանն էլ վատ չէ, դե, չորսն էլ ոչինչ: Այ, ութն ուրիշ է է. ուր տարեկան որ լինեն, արդեն հենց այդքան կմնա, որ չափահաս դառնաս»:

- Ափսո՞ն, շատ ափսոս, որ չեմ կարող քեզ օգնել,- ասաց նա: - Ուղղակի զգիտեմ, թե ով է իր ծննդյան օրը մոռացել:

Ու Յալմարը տուն վագեց: Եկավ տեսավ՝ հայրն արդեն զլխի վրա կանգնած չէր, այլ նստել էր սեղանի մրտ ու ճաշ էր ուտում:

- Հիշել եմ,- ասաց փիդ հայրիկը,- ես այդպես էլ զիտեի, որ դա երեկ էր, կամ վաղը, կամ էլ այսօր: Հենց այդպես էլ զիտեի:

- Ի՞նչն է այսօր,- հարցրեց Յալմարը:
- Այսօր քո ծննդյան օրն է,- սենյակ մտնելով՝ ասաց փիդ մայրիկը: - Այսօր քո վեց տարին լրացավ:

Յալմարը ուրախացավ, հուզվեց ու շուտ հետ վազեց եղեգնուտի մոտի փոքր բլուրը:

- Լսի՞ր,- զոռաց նա,- պարզվեց, որ դու ի՞մ Ծննդյան օրն ես: Այսօր ե՞ս եմ վեց տարեկան դառնում:

- Ո՞վս,- ուրախացավ մոռացված Ծննդյան օրը,- ջա՞ն, ջա՞ն, ջա՞ն:
- Երեկոյան քեյի հետ Յալմարն ստացավ իր տոնական տորքը՝ վրան էլ վեց մոմ: Նա կնճիքը ձգեց, վեցն էլ միանգամից հանգցրեց:

«Ի՞նչ լավ է,- մտածեց նա: - Շատ լավ է վեց տարեկան դառնալը»:

Պատմի՛ր այս պատմության փղերի ընտանիքի մասին:

---

---

Դուքս գրիր պատմության ամենազարմանալի հատվածը և նկարի՛ր:

---

---

---

Դուքս գրիր պատմության տխուր հատվածը:

---

---

---

Պատմի՛ր ամենաուրախ հատվածը:

---

---

---

Յալմարն ինչպիսի՞ն է:

---

---

---

Ո՞ր հատվածներով կարող ես հաստատել կարծիքը:

---

---

---

---

Ծննդյան օրն ինչո՞ւ էր լաց լինում, չէ՞ որ իր սոռը «փրկվել» էր:

—

Այս պատմությունը պատմի բ մոռացված Ծննդյան օրվա անունից:

Ինչպիսի՞ն եր մոռացված Ծննդյան օրը, պատմիք Արա մասին:

---

---

---

---

Գու քանի՞՞ տարեկան կուզենայիր լինել, ինչո՞ւ:

---

---

Ծնորհավորի՞ր կորած Ծննդյան օրվան՝ զտնվելու առթիվ:

---

---

Պատմի՛ր.

Մի անգամ, երբ ես շատ փոքր էի, \_\_\_\_\_

---

---

---

---

---

---

---

---

## ՄԱՐՏ

Այս, էսպես էլ զիժ ամիս.  
 Մարդու հանգիստ չի տալիս:  
 Էսօր ուրախ օք կանի,  
 Վաղը անձրեւ ու քամի.  
 Առավոտը պայծառ օդ,  
 Կեսօրը մուր ու ամպոտ:  
 Սին հազնում է սպիտակ,  
 Սին կանաչին է տալիս.  
 Սի օք ցուրտ է, մի օք տաք,  
 Սին խնդում է, մին լալիս...  
 Այս, էսպես էլ զիժ ամիս:

*Գրիք և մկարիք քեզ դուր եկած հատվածը :*

---



---



---



---



---

*Քո կարծիքով ինչպիսի՞ն է մարտի ուրախ օքը:*

*Այդ օքը երկնքում ամպեր չեն լինում, արիք \_\_\_\_\_*

---



---



---

*Ե՞րբ է մարտը խնդում և ե՞րբ է լալիս:*

*Մարտը ծիծաղում է, երբ \_\_\_\_\_*

---



---



---

Նկարի՛ր մարտ ամսվա տարբեր «դեմքերը» և յուրաքանչյուրի կողը գրի՛ր բանաստեղծության համապատասխան հատվածը:

*Էսօռ ուրախ օր կանի*

*Վաղը անձրկ ու քամի*

---

---

---

Իսկ ինչպիսի՞ն է եղել այն օրը, որի մասին Թումանյանը գրել է.  
Առավոտը պայծառ օդ,  
Կեսօրը մուր ու ամպուտ:  
Երբ լույսը բացվել է \_\_\_\_\_

---

---

---

Գրիք բանաստեղծության այն տողը, որը կընտրեիր որպես վերճագիր:

---

Շարունակիք.

կամակոր	մարտ	_____	մարտ
_____	մարտ	_____	մարտ
_____	մարտ	_____	մարտ

Հորինիք հանելուկ մարտ ամսվա մասին:

---

---

---

---

---

Ո՞րն է տարվա ամենախելոք ամիսը: Ինչո՞ւ:

---

---

Հորինակը.

Գարուն աղջիկը

# ՎԻՆԻ-ԹՈՒԽ

(1-ին մաս)

Վաղուց, շատ վաղուց, կարծեմ անցյալ ուրբար, Վինի-Թուխը մեն-մենակ ապրում էր անտառում: Նրա տան դռան վերևի տախտակին ոսկե տառերով գրված էր՝ «Սիստ Սանդեր»:

Մի օր Վինի-Թուխը գնաց զրունելու: Անտառի բացատում մեծ կաղնի կար: Կաղնու կատարին ինչ-որ մեկը բարձրածայն բզում էր՝ զզզզ զ:

Վինի-Թուխը նստեց ծառի տակ, գլուխն առավ բարերի մեջ ու սկսեց ծանր ու մեծ միտք անել: Սկզբում մտածեց. «Այս զզ զ-ն անպայման մի բան նշանակում է, ո՞վ է հենց այդպես, զուր տեղը բզում: Ծառը բզզալ չի կարող: Ուրեմն այնտեղ մեկը կա: Խսկ ինչո՞ւ պիտի բզզա, եթե մեղու չէ: Այդպես է, որ կա»:

Հետո էլի մտածեց-մտածեց ու ինքն իրեն ասաց. «Խսկ ինչի՞ համար են մեղուները. մեղը սարքելու: Այդպես է, որ կա»:

Ապա կանգնեց ու ասաց.

- Խսկ մեղը ինչի՞ համար է, որ ես ուտեմ: Իմ կարծիքով այդպես է, որ կա:

Ասաց ու սկսեց բարձրանալ ծառը: Բարձրանում էր ու քրի տակ երգում հենց նոր հորինած երգը.

Թե արջուկները մեղու լինեին,  
Նրանց մտքովն անգամ չէր անց-  
նի


Տունը կառուցել այ այսքան  
բարձր,

Տունն այսքան բարձր չէին  
կառուցի:

Նա մի քիչ էլ բարձրացավ...  
Էլի մի քիչ... մի պստիկ էլ...  
Այստեղ հեաց ու նոր բառատող  
- հեկանիկ հորինեց.

Ահա այդ դեպքում, եթե իհարկե,

Մեղուները արջուկ լինեին,  
Արջուկների էլ ինչի՞ն էր պետք,  
Որ բարձրանային այս խսկա կաղնին:



Մեղ մեջ ասած, Թուխը կարգին հոգնել էր, դրա համար էլ հևիելիկը այնքան էլ լավ չստացվեց: Համարյա քան չէր մնացել, մնում էր հասնել այս ճյուղին ու...

Թրա՛խկ:

- Մա՞-, կանչեց Թուխը: Խեղճը խփվում էր ճյուղերին, օդի մեջ զլուխկոնծի էր տալիս՝ գոռալով.

- Ա՞խ... մա՞... ախր ինչո՞ւ ես... Ախր ոչ մի վատ քան չէի ուզում անել:

Վերջապես ընկավ ներքեում աճող մասրենու թվերի մեջ:

- Այս բոլորի պատճառը մեղքն է. ախր ես մեղք շատ եմ սիրում,- վիճրվնաց Թուխը:

Նա մի կերպ դուրս պրծավ մասրենու թվերի միջից, քրից պոկեց փշերը ու նորից մտքերի մեջ ընկավ. տեղնուտեղը հիշեց Քրիստոֆեր Ոռքինին: Քրիստոֆեր Ոռքինը Թուխի քարեկամն ու խորհրդատուն էր: Նա խելոք ու քարի տղա էր:

*Փորձիք ճիշտ տեղերում գրել՝ լուրջ մտածել, իզնիք, անմիջապես, ցածրածայն (իր համար) երգել, շատ հոգմել.*

*Ժամը ու մեծ միտք անել \_\_\_\_\_*

*զուր տեղը \_\_\_\_\_*

*բրի տակ երգել \_\_\_\_\_*

*կարգին հոգմել \_\_\_\_\_*

*տեղմուտեղը \_\_\_\_\_*

*Դուքս գրիք բացատի ու կաղնու մասին պատմող հատվածը ու նկարիք:*

---

---

---

---

*Ծառը տեսնելուց և բզեցը լսելուց հետո ի՞նչ արեց Վինի-Թուխը, այդ նախադասությունը դուքս գրիք և նկարիք:*

---

---

---

*Մեղուներից մեկն ինչպես կպատմի այս պատմությունը՝ շարունակիք.*

*Ծա՞յտ վաղուց, կարծեմ՝ անցյալ ուրրար աշխատում էինք ու բզեց:*

---

---

---

---

Եթե մեղուները մեղք պատրաստելու համար են, ապա արգե՞րն ինչի համար են:

Վիճի-Թուխի անունից մեղուսերին դիմիք:

## Հարուսակի՛ր հորինել.

## Արօր մտքերի մեջ

Արջ Ծուռաբը զրունում էր քաղաքում: Երբ անցնում էր Ստրեր կոչվող փողոցի, տեսավ, որ ծիծադեյի մտքերը ինչ-որ քան են կառուցում:

# ՎԻՆԻ-ԹՈՒՆ

(2-րդ մաս)

Եվ այսպես, Վինի-Թունը զնաց իր բարեկամ Ջրիստոֆեր Ռոբինի մոտ, որն ապրում էր անտառում, կանաչ դուռ ունեցող տնակում:

- Բարի լույս, Ջրիստոֆեր Ռոբին:
- Բարի լույս, Թո'նս,- ուրախացավ տղան:
- Լսի՞ր, դու պատահաքար փուչիկ չունե՞ս:

- Փուչի՞կ:  
- Այո, գալիս էի ու մտածում. «Տեսնես Ջրիստոֆեր Ռոբինը փուչիկ ունի»: Պարզապես հետաքրքիր է:

- Փուչիկն ի՞նչ ես անում:  
Վինի-Թունը նայեց շորջը, համոզվեց, որ իրենց ոչ ոք չի լսում, բարը մոտեցրեց բերանին ու շշնջաց.
- Մե՛ղը:
- Ի՞նչ:
- Մեղը,- կրկնեց Վինի-Թունը:

- Ո՞վ է փուչիկով մեղը բերելու զնում:

- Ե՞ս,- ասաց Վինի-Թունը:  
Հենց երեկ երեկոյան Ջրիստոֆեր Ռոբինը հյուր էր զնացել իր բարեկամ Դնչիկի տուն, որտեղ նրան երկու փուչիկ էին նվիրել՝ կապույտ ու կանաչ:
- Սրանցից ո՞րն է քեզ դուր գալիս,- հարցրեց Ջրիստոֆեր Ռոբինը:

Թունը գլուխ առավ բարեկի մեջ.

- Եթե ուզում ես մեղը ձեռք զցել, այնպես պիտի անես, որ մեղուները քեզ չնկատեն: Կանաչ փուչիկը տեսնելիս նրանք կմտածեն, որ դա տերև է և քեզ չեն նկատի: Խսկ եթե փուչիկը կապույտ լինի, նրանք երեկի կմտածեն, որ այն պարզապես ամպի կտոր է, և դարձյալ քեզ չեն նկատի: Տեսնես՝ ո՞րի՞ն ավելի շուտ կիավատան:

- Դու կարծում ես փուչիկի տակ նրանք քեզ չեն նկատի՞:

- Կարող է նկատեն, կարող է՝ ոչ,- ասաց Վինի-Թունը: - Ի՞նչ իմանաս՝ ի՞նչ կանց-



նի մեղուների մտքով:

Թուխը մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց.

- Ես կձևացնեմ, քե իբր փոքրիկ, թուխ ամպիկ եմ: Այդ դեպքում նրանք երևի գլխի ընկնեն:

- Ուրեմն ավելի լավ է կապույտ փուչիկը վերցնես, - ասաց Քրիստոֆեր Ռոբինը:

Բարեկամներն այդպես էլ արեցին: Թուխը վերցրեց կապույտ փուչիկը, Քրիստոֆեր Ռոբինը՝ իր հրացանը, և երկուսով ճանապարհ ընկան:

Վինի-Թուխը նախ և առաջ մոտեցավ մի ծանոք ջրափոսի, մի լավ քավալվեց ցեխաջրում, որ կարգին սևանա, նմանվի խևական ամպիկի: Հետո սկսեցին փուչիկը օդով լցնել: Հենց փուչիկը շատ ուժեց, Ռոբինը թելք քաց քողեց: Վինի-Թուխը փուչիկի հետ երկինք սլացավ ու կախվեց օդում:

- Ուսաաա, - քացականչեց Քրիստոֆեր Ռոբինը:

- Հը, ո՞նց է, - երկնքից կանչեց Վինի-Թուխը, - իիմա ո՞ւմ եմ նման:

- Դու նման ես արջի, որ քոչում է փուչիկից կախված:

- Փոքրիկ սև ամպիկի նման չե՞մ, - անհանգստացավ Վինի-Թուխը:

- Այնքան էլ չէ:

- Դե լավ, ոչինչ, այստեղից երևի նման եմ: Եվ հետո, ի՞նչ իմանաս, քե մեղուների մտքով ինչ կանցնի:

Դժբախտաբար քամի չկար, և Թուխը բոլորովին անշարժ կախված էր օդում: Նա կարող էր մեղրի հոտն առնել, կարող էր տեսնել մեղրը, քայլ մեղրին հասնել ոչ մի կերպ չը կարող:

**Նկարագրի՛ր Վինի-Թուխին:**

---

---

**Պատմի՛ր Վինի-Թուխի մասին:**

---

---

**Պատմի՛ր Քրիստոֆեր Ռոբինի մասին:**

---

---

**Վիճի-Թուխն ու Քրիստոֆեր Ոռքինը ինչպիսի՞՛ ընկերներ են: Ինչո՞ւ եւ  
այդպես կարծում:**

---

---

---

**Վիճի-Թուխը ի՞նչ կպատմեր մեղրի մասին:**

---

---

---

# ՎԻՆԻ-ԹՈՒ

(3-րդ մաս)

Մի քիչ համբերելուց հետո Թուխը նորից խոսեց:

- Քրիստոֆեր Ռորին, - շշուկով կանչեց նա:

- Ի՞նչ...

- Ինձ թվում է, մեղուներն ինչ-որ քան են կասկածում:

- Ի՞նչ:

- Զգիտեմ: Բայց ինձ թվում է, որ նրանք իրենց կասկածելի են պահում:

- Գուցե նրանք մտածում են, թե դու ուզում ես գողաճա՞լ իրենց մեղքը:

- Գուցե: Ի՞նչ իմանաս՝ ինչ կանցնի մեղուների մտքով:

Նորից լոռուրյուն տիրեց, և քիչ հետո նորից լսվեց Թուխի ձայնը՝ Քրիստոֆեր Ռորին:

- Ի՞նչ:

- Դու տանք հովանոց չունե՞ս:

- Կարծեմ՝ ունեմ:

- Որ այդպես է, շատ եմ խնդրում, գնա տուն, թեր հովանոցդ և զիսիդ պահած հետ ու առաջ քայլիք: Ծարունակ նայիր ինձ ու ասա. «Վա՛յ, վա՛յ, վա՛յ, կարծես անձրև է զալու»: Կարծում եմ այդ ժամանակ մեղուները մեզ կիավատան:

Քրիստոֆեր Ռորինը մտքում ծիծաղեց ու ասաց. «Ախ, դու հիմա՞ր արջուկ», - բայց նա այդ քանը բարձրածայն չասաց, որովհետև շատ էր սիրում Թուխին:

Նա գնաց տուն, թերեց հովանոցը:

- Վերջապե՞ս, - բացականչեց Թուխը, երբ Քրիստոփեր Ռորինը վերադարձավ: - Արդեն սկսել

էի անհանգստանալ: Ես նկատեցի, որ մեղուներն արդեն իրենց կասկածելի են պահում:

- Հովանոցը քացե՞մ, թե պետք չէ:

- Բա՛ց արա, անպայման բա՛ց արա: Բայց սպասի՞ր մի բոպե, պետք է հաստատ գործ բռնել:

Ամենից կարևորը մեղուների քագուհուն խարելն է: Դու նրան տեսնո՞ւմ ես:

- Չե:

- Դե լավ, ոչինչ, նա երևի թեզ տեսնում է: Իսկ հիմա բա՛ց արա հովանոցը և զիսիդ պահած՝ հետ ու առաջ քայ-



լիր: Շարունակ ինձ նայի՞ր ու ասա՛. «Վա՛յ, վա՛յ, վա՛յ, կարծես թե անձրև է գալու», - իսկ ես կերգեմ Ամպիկի երգը, որը, երևի, երգում են բոլոր ամպիկները երկնքում... Դե, սկսի՛ր:

Քրիստոֆեր Ռորինը սկսեց ծառի տակ հետ ու առաջ քայլել և ասել.  
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, կարծես թե անձրև է գալու:  
Իսկ Վինի-Թուխը երգեց այս երգը.

Ես Ամպիկ եմ, Ամպիկ, Ամպիկ,  
Ոչ թե փոքրիկ քուխ արջուկ,  
Ա՛խ, ինչ լավ է լինել Ամպիկ  
Ու սավառնել երկնքում:

Ա՛խ, երկնքում կապո՞ւյտ-կապո՞ւյտ  
Ե՛ւ հարմար է, ե՛ւ խաղաղ,  
Դրա համար Ամպիկների  
Երգը թերև է, ուրախ:

Բայց մեղուները, որքան էլ տարօրինակ է, Ամպիկին հավատալու փոխարեն, ավելի ու ավելի կասկածելի էին քզում: Մի քանիսը նույնիսկ դուրս քոան բնից ու սկսեցին պտտվել Ամպիկի շուրջը: Իսկ ամենակասկածութներից մեկը նույնիսկ մի քանի վայրկյան Ամպիկի քրին նստեց:

- Հե՛յ, Ռորին, - գոռաց Ամպիկը:
- Ի՞նչ:
- Ես մտածեցի, մտածեցի ու գլխի ընկա: Սրանք ճիշտ մեղուներ չեն:
- Ի՞նչ ես ասում:
- Այո՛: Այնպես որ, ավելի լավ է ցած իշնեմ:
- Իշի՛ր, - ասաց Քրիստոֆեր Ռորինը: - Բայց ինչպե՞ս:

Այդ մասին Վինի-Թուխը չէր մտածել: Նա մտածեց, որ երե պարանը քաց քողնի, կընկնի: Դա նրան դուր չեկավ: Այդ ժամանակ ինչպես պետք է էլի մտածեց և ասաց.  
- Քրիստոֆեր Ռորին, դու պետք է իրացանով խփես փուչիկին:

- Բայց երե ես խփեմ, փուչիկը կծակվի:
- Իսկ երե չխփես, ես կծակծկվեմ, - ասաց Թուխը:

Քրիստոֆեր Ռորինը անմիջապես հասկացավ, թե ինչ պետք է անել: Նա խնամքով նշան բռնեց և կրակեց:

- Վա՛յ, վա՛յ, վա՛յ, - լաց եղավ Թուխը:
- Մի՞թե վրիպեցի, - հարցրեց Քրիստոֆեր Ռորինը:
- Չի կարելի ասել, թե վրիպեցիր, - ասաց Թուխը, - բայց փուչիկին չղիպար:
- Ների՛ր, խնդրում եմ, - ասաց Քրիստոֆեր Ռորինը և նորից կրակեց: Այս անգամ նա չվրիպեց: Օդն սկսեց կամաց-կամաց դուրս գալ փուչիկից, և Վինի-Թուխը քարեհաջող վայրէց կատարեց:

Միայն թե այդքան ժամանակ թելից կախված լինելու պատճառով նրա քարերը ամբողջովին փայտացել էին:

Մի ամբողջ շաբար Թուխը չէր կարողանում առջևի քարերը շարժել, և դրանք այդպես էլ մնացել էին վեր-տնկված: Եվ երե նրա քրին ճանձ էր նստում, Թուխը ստիպված էր լինում այդ աներեսին փշելով քել՝ «Թո՛ւխս, քո՛ւխս»:

Եվ գուցե, թեև ես դրանում համոզված չեմ, գուցե հենց այդ դեպքից հետո էլ Քրիստոփեր Ռորինը նրան Թուխ անվանեց:

Այս պատմությունը մեղուների անունից պատմի՞՛:

# ՄԱՆՉՈՒԿԱՆ ՈՒ ԿԱՌՍՈՆԵ

(1-ին մաս)

Մառկհոլմ քաղաքը սովորական քաղաք է: Այդ քաղաքի շատ սովորական մի շենքում ապրում է սովորական մի ընտանիք:

Այդ ընտանիքում բոլորը սովորական են՝ հայրիկն էլ է սովորական, մայրիկն էլ: Բուսան, թետան և Մանչուկն էլ սովորական երեխաներ են:

Ամբողջ շենքում ընդամենք մի անսովոր արարած կա՝ Կառլսոնը, որն ապրում է կտորին:

Գուցե ուրիշ քաղաքներում կտորին ապրելը սովորական բան է, բայց այստեղ ոչ ոք կտորն չի ապրում:

Կառլսոնը փոքրիկ, հաստլիկ, ինքնավստահ մարդուկ է: Նա կարողանում է քոչել: Հենց փորի վրայի կոճակը սեղմի, մեջքին գտնվող փոքրիկ շարժիչը կաշխատի, մի քիչ հետո կպտտվի պտուտակը, և Կառլսոնը կրոչի:

Նա շատ լավ է զգում կտորն, ամեն իրիկուն նստում է ու նայում աստղերին, կտորից աստղերն ավելի լավ են երևում:

Մարդիկ նույնիսկ չզիտեն, որ կտորն տնակ կա, չնա էլ կարող տեսնել, որովհետև այն քաքնված է ծխնելույզի ետևում: Ընդհանրապես, մեծերը ուշադրություն կդարձնեն այդքան փոքր տան վրա:



Մանչուկին տանը բոլորը սիրում են ու երես տալիս: Բայց այդ օրը, երբ նա ու Կառլ-  
ստանը ծանորացան, այնքան էլ հաջող օր չէր, և Մանչուկ լինելը բոլորովին էլ հրաշալի  
չէր: Բոլորը նեղացրել էին նրան, իսկ հայրիկը բարկացել էր դպրոցից ուշ գալու հա-  
մար:

- Թափառում ես փողոցներում,- ասել էր նա:

Բայց, ախր, հայրիկը չգիտեր, որ ճանապարհին մի փոքրիկ, սիրունիկ շնիկ էր հան-  
դիպել, հոտոտել էր իրեն, շարժել պոչիկը, կարծես ուզում էր ի՞ր շնիկը դառնալ: Ման-  
չուկը նրան կրերեր, բայց ո՞վ կրողներ տանը շուն պահել: Բացի դրանից, այդ ժամա-  
նակ մի մորաքույր էր հայտնվել և կանչել շանը.

- Ոիկի՛, Ոիկի՛:

Փոքրիկը հասկացել էր, որ շունը երբեք իրենը չի լինի:

- Ուրեմն ամբողջ կյանքում առանց շան եմ ապրելո՞ւ, - տխուր ասաց Մանչուկը: -  
Այ, մայրիկ, դու հայրիկ ունես, Բեսան և Բետան միշտ միասին են, իսկ ես... ես մենակ  
եմ, ոչ ոք չունեմ:

- Սիրելի՛ Մանչուկ, չէ՞ որ բոլորս քոնն ենք,- ասաց մայրիկը:

- Զգիտեմ...,- հոգոց հանեց Մանչուկը, ու նրան հանկարծ թվաց, թե ինքը մեն-  
ակ է աշխարհում ու ոչինչ չունի:

Ասենք՝ մի սենյակ ունի և գնաց այնտեղ:

Պատմի՛ր Սանչուկի ընտանիքի մասին:

---

---

---

Պատմի՛ր Կառլսոնի մասին:

---

---

---

Պատմի՛ր Սանչուկի մասին:

---

---

---

Հիշո՞ւմ ես շան ու Սանչուկի հանդիպումը. պատմի՛ր այդ հատվածը:

---

---

---

---

---

Ի՞նչ կենդանի կուզենայիր ունենալ. ինչո՞ւ:

---

---

---

---

*Ի նրա հորինիր.*

*Ծնիկն ու լուսինը*

# ՄԱՆՉՈՒԿԱՆ ՈՒ ԿԱՌԱՌՈՒ

(2-րդ մաս)

Գարնանային պարզ երեկո էր: Երկնքում աստղերը նոր էին սկսել երևալ: Մանչուկը նայում էր բաց պատուհանից ու մտածում այն շնիկի մասին, որին ցերեկն էր հանդիպել:

Փոքրիկը հոգոց հանեց: Հանկարծ ինչ-որ բոյլ բզեց լսվեց: Զայնը քիչ-քիչ ուժեղացավ, ու այդ քեզ բան, պատուհանի մոտ՝ օդում, մի հաստիկ մարդուկ երևաց: Դա հենց Կառլսոնն էր, որն ապրում էր կտորին. Մանչուկը նրան դեռ չէր ճանաչում: Կառլսոնը երկար նայեց Մանչուկին ու բռավ: Բարձրացավ վեր, պտտվեց ծխնելույզի շուրջը, վերադարձավ և փոքրիկ ինքնարինի նման մի երկու-երեք պտույտ գործեց:

Փոքրիկը զարմացած սպասում էր, թե ինչ է լինելու. Խուզմունքից շունչը կտրվում էր. չէ՞ որ պատուհանի մոտով ամեն օր հաստիկ մարդուկներ չեն քոչում:

Մարդուկը մոտեցավ պատուհանին.

- Ողջո՞ւն: Կարելի՞ է այստեղ մի վայրկյան վայրէջք կատարել:

- Իհարկե, խնդրեմ,- շտապ պատասխանեց Մանչուկը, - ի՞նչ է, դժվա՞ր է քոչել:

- Թոչե՞լը... բոլորովին, - շատ լուրջ ասաց Կառլսոնը, - չէ՞ որ ես աշխարհի ամենալավ քոչողն եմ: Անոնդ ի՞նչ է:

- Մանչուկ:

- Իսկ իմը Կառլսոն է:



Ուղակի Կառլսոն ու՝ վե՛րջ: Ողջո՞ւյն, Մանչո՞ւկ:

- Ողջո՞ւն, Կառլսո՞ն:

- Քանի՞ տարեկան ես:

- Յոր:

- Հրաշալի է: Ծարունակենք զրույցը, - ասաց Կառլսոնը: Մեկ վայրկյան հետո նա հայտնվեց սենյակում:

- Իսկ դո՞ւ քանի տարեկան ես, - հարցրեց Մանչուկը. չէ՞ որ Կառլսոնն իրեն երեխայի նման էր պահում, և չէիր ասի, թե մեծահասակ է:

- Քանի տարեկա՞ն եմ. ես ուժերի ծաղկում շրջանում գտնվող տղամարդ եմ:

Փոքրիկը լավ չէր հասկանում՝ ինչ է նշանակում ուժերի ծաղկում շրջանում գտնվող տղամարդ: Գուցե ի՞նքն էլ է գտնվում ուժերի ծաղկման շրջանում: Այդ պատճառով էլ գգո՞ւյց հարցրեց.

- Իսկ ո՞ր տարիքում են ուժերը ծաղկում:

- Ցանկացած, - ինքն իրենից գոհ պատասխանեց Կառլսոնը: Ցանկացած, եթե խոսքն ի՞մ մասին է: Ես գեղեցիկ, խելացի տղամարդ եմ:

*Պատմի՛ր՝ ինչպես հայտնվեց Կառլսոնը:*

---

---

---

---

---

*Ինչպիսի՞ն է Կառլսոնը: Ինչո՞ւ ես այդպես կարծում:*

---

---

---

---

---

*Ինչպիսի՞ տղամարդ է Կառլսոնը իր կարծիքով:*

---

---

---

---

---

## Հարուսակիք հորինել.

Վիճի-Թոխը, փուչիկից բռնած, կախվել է օդում: Որտեղից որտեղ հայտնվում է Կառլ Աննը:

# ՄԱՆՉՈՒԿԱՆ ՈՒ ԿԱՌԼՍՈՆԸ

(3-րդ մաս)

Կառլսոնը մոտեցավ Մանչուկի պահարանին, վերցրեց խաղալիք մերենան:

- Արի սա լարենք:
- Առանց հայրիկի չի կարելի,- ասաց Մանչուկը: - Մերենան կարելի է աշխատեցնել միայն հայրիկի կամ Բոսեի հետ:

- Հայրիկի, Բոսեի կամ կտորին ապրող Կառլսոնի հետ: Խաղալիք մերենաների ամենալավ մասնագետը աշխարհում Կառլսոնն է: Հայրիկիդ էլ այդպես կասես:

Նա վերցրեց մերենայի շիշը, սպիրտը նրա միջից դատարկեց մերենայի մեջ և վառեց պատրույզը: Զնայած Կառլսոնը խաղալիք շոգեմերենայի լավագույն մասնագետն էր, բայց սպիրտը լցնելիս այնպես բափեց, որ դարակի վրա սպիրտի լճակ առաջացավ: Լճակը տեղուուեղը վառվեց, կրակի լեզվակներն սկսեցին պարել: Մանչուկը վախեցած ճշաց ու հետ փախավ:

- Հանգիստ, միայն հանգիստ,- ասաց Կառլսոն՝ բարձրացնելով թմրիկ բարը: Բայց Մանչուկը չէր կարող հանգիստ կանգնել ու նայել: Նա վերցրեց լարի կտորը, խփելով հանգըրեց կրակը: Դարակի վրա տեղ-տեղ բժեր հայտնվեցին:



- Տե՛ս՝ ինչպես փշացավ դարակը,- մտահոգ ասաց Մանչուկը: - Հիմա մայրիկն ի՞նչ կասի:

- Հասարակ քան է: Մի քանի պստիկ բծեր են, էլի՛: Մայրիկիդ այդպես էլ ասա:

Մի քանի վայրկյան հետո մերենան աշխատեց՝ փո՛փ-փո՛փ-փո՛փ: Կառլսնի աշբերը փայլեցին, նա շատ հպարտ էր, կարծես ինքն էր հայտնազործել մերենան:

- Փո՛փ-փո՛փ-փո՛փ,- ծխում էր մերենան:

Մանչուկը մոռացել էր դարակի բծերը. նա երջանիկ էր, որ ծանորացել է այս մերենայի լավագույն մասնագետի հետ:

- Դե՛, Մանչուկ,- ասաց Կառլսնը,- ա՛յ, սա գործ է, ես աշխարհի լավագույն մաս...

Խոսքը մնաց Կառլսնի բերանում, որովհետև հենց այդ պահին պայրյուն լսվեց մերենան այլևս չկար, նրա կտորները բռան սենյակով մեկ:

- Պայրե՛ց,- հիացած կանչեց Կառլսնը, կարծես այդ մերենայով նա աշխարհի ամենահետաքրքիր ֆոկուսն էր արել:

- Ազնիվ խոսք, մերենան պայրեց: Ի՞նչ պայրյուն էր: Ի՞նչ լավ էր:

Խսկ Մանչուկը կանգնել էր շփորփած, արցունքն աչքերում:

- Իմ մերենան,- սնգրտաց նա,- իմ մերենան կտոր-կտոր եղավ:

- Հասարակ քան է,- Կառլսնը անհոգ քափ տվեց հաստիկ քարը,- ես քեզ ավելի լավը կտամ:

- Դո՞ւ,- զարմացավ Մանչուկը:

- Այո՛, վերևում ես հազար հատ այսպիսի մերենա ունեմ:

- Որտե՞ղ՝ վերևում:

- Վերևում, կտորին գտնվող իմ տնակում:

- Դու տնակ ունե՞ս և հազար հատ մերենա՞:

- Դե՛, մի երկու հարյուր հատ հաստատ կլինի:

- Ա՛յ քեզ իրաշը՝ մերենաներով լցված տուն,- հիացավ Մանչուկը: - Ինչպես կուզեի այնտեղ գնալ:

- Դե՛, ես չեմ հաշվել քանի մերենա է մնացել, քայց մի քանի հատ կլինի:

- Սեկն ինձ կտա՞ս:

- Իհարկե՛:

- Հենց հիմա՞:

- Դեռ ո՞չ: Ծուտով դու կստանաս քո մերենան: Մանչուկը սկսեց հավաքել պայրած մերենայի մասերը:

- Պատկերացնում եմ՝ ինչպես կրարկանա հայրիկը:

- Դա հասարակ քան է: Մի՞ք դրա համար քարկանում են: Այդպես էլ ասա հայրիկիդ: Ես կասեի, քայց շտապում եմ, վերևում գործեր կան, պիտի տուն գնամ:

- Ծատ լավ է, որ մենք հանդիպեցինք: Ավտոս մերենան... Դու էլի կզա՞ս...

- Հանգիստ, միայն հանգիստ,- ասաց Կառլսնը և սեղմեց փորի վրայի կոճակը: Ծարժիչը սկսեց դոռալ: Քիչ հետո մեջքի պտուտակը պտտվեց: - Ծարժիչը խոխոռում է: Արիեստանոց պիտի գնամ, որ յուղեն: Դա ինքս կանեի, քայց ժամանակ չկա:

Կառլսնը պատուհանից դուրս բռավ: Նրա փոքրիկ, հաստիկ մարմինը պարզ երևում էր աստղերով ծածկված երկնքի տակ:

- Հաջողությո՞ւն, Մանչուկ,- կանչեց Կառլսնը, քափ տվեց քմբլիկ քարիկը և անհետացավ:

Փորձիք պատմել այս պատմոթյան ամենատխոր հատվածը:

---

---

---

---

Քեզ դուք եկա՞վ Կառլսոնը. ինչո՞ւ:

---

---

---

---

Քո կարծիքով ինչե՞ր կան Կառլսոնի տանը:

---

---

---

---

Ինչո՞ւ ես այդպես կարծում:

---

---

---

## ԱՌՈՒՆ

Մեր այգու դռան մոտով  
 Գնում է մի ջինջ առու,  
 Մեր այգու անուշ հոտով  
 Գնում է հեռո՞ւ, հեռո՞ւ:  
 Գնում է ու չի քնում,  
 Չի քնում բոլոր տարին,  
 Գնում է, գնում, գնում  
 Խառնվում Որոտանին:  
 Ափերին՝ ծառ ու ծաղիկ,  
 Հատակին՝ ոսկի ավազ,  
 Գնում է ալիք-ալիք,  
 Հասնում է մինչև Արագ:  
 Հյուսվում է Արագի հետ,  
 Նրա հետ մտնում է ծով.  
 Մեր այգու ցողերի հետ,  
 Մեր այգու անուշ հոտով:  
 Մեր այգու դռան մոտով  
 Գնում է մի ջինջ առու,  
 Մեր այգու անուշ հոտով  
 Գնում է հեռո՞ւ, հեռո՞ւ:

Փակագծերում գրված քառերից մեկը ընտրի՛ք և գրի՛ք.

Մեր այզու դրան մոտով

Գնում է մի \_\_\_\_\_ առու...

(զինջ, պարզ, զուլալ, թափանցիկ)

Մեր այզու \_\_\_\_\_ հոտով...

Գնում է հեռո՞ւ, հեռո՞ւ:

(քննուշ, անուշ, բուրավետ)

Գնում է չի քնում,

Չի քնում \_\_\_\_\_ ...

(օր ու գիշեր, ողջ տարին, բոլոր տարին)

Ավերին ծառ ու ծաղիկ

Հատակին \_\_\_\_\_ ավագ...

(դեղին, ոսկի, մանր)

Գրի՛ք և նկարի՛ք քեզ դուք եկած քառատողը:

---

---

---

Գրի՛ք և նկարի՛ք ամենագեղեցիկ տողը:

---

---

---

Իմշպե՞ս ես հասկանում.

Գնում է ու չի քնում,  
Չի քնում բոլոր տարին:

---

---

Առուն ի՞նչ է տանում իր հետ մինչև ծով. զրի՛ր այդ հատվածը

---

---

---

---

Ի՞նք հորինիր.

Առուն

---

---

---

---

---

---

---

---

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշնան վերջը	Հ.Թումանյան	3
Ամպճ ու սարք	Հ.Թումանյան	6
Չափարծիտ	Ա.Սահակյան	7
Փափուկ ձյուն	Գ.Սարյան	11
Ուկու կարասը	Հ.Թումանյան	14
Կիկոսի մահը	Հ.Թումանյան	19
Շունն ու կատուն	Հ.Թումանյան	24
Չարի վերջը	Հ.Թումանյան	30
Մուկիկի մահը	Հ.Թումանյան	38
Պույպույ մուկիկը	Դ.Դեմիրճյան	43
Գնդիկ-բռքոնիկ	Առա. Ժող. Խերիար	52
Մրից վախեցող ավառորուար	Դ.Բիսեր	56
Մոռացված ծննդյան օրը	Դ.Բիսեր	59
Մարտ	Հ.Թումանյան	64
Վիճի-թուլս (1-ին մաս)	Ա.Ա.Միլճ	68
Վիճի-թուլս (2-րդ մաս)		72
Վիճի-թուլս (3-րդ մաս)		75
Մանչուկն ու Կառլսնը (1-ին մաս)	Ա.Լինդգրեն	78
Մանչուկն ու Կառլսնը (2-րդ մաս)		82
Մանչուկն ու Կառլսնը (3-րդ մաս)		85
Առուն	Հ.Սահյան	88

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՆՈՐ ԴՊՐՈՑ»  
հրատարակչություն  
1996 թ. Երևան

Ախղա Թելմանի  
Պետրոսյան  
ՍԱՏԵՆԻԿ  
Մայրենիի գիրք-տետր  
2-րդ դասարանցու համար  
2-րդ մաս

Խմբագիրներ՝

Գեղ. Խմբագիր՝

Նկարիչ՝

Տեխ. Խմբագիր՝

և էջադրող՝

Սրբագրիչ՝

Ս. Սիմոնյան

Ա. Համբարձումյան

Ա. Հովսեփյան

Շ. Շահիբյան

Ս. Սարատիկյան

Ա. Հովհաննիսյան

Սառագրված է տպագրության 30.01.1996թ.: Չափսը 60x841/8:

Տպագրությունը՝ օֆսեր: Ծավալը՝ 11.5 տպ. մամուլ: Տպարանակը՝ 48000:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ՆՈՐ ԴՊՐՈՑ»

հրատարակչություն

Երևան, Սպորտիկներնի 73:

Տպագրված է «Հակոբ Մելապարտ տպագրատուն» թղթ տպարանում:

Երևան 9, Տերյան 91:

